

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին

Նախաբան

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները և սույն Կոնվենցիան ստորագրած այլ Կողմերը,

հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի՝ իր անդամների միջև առավել միասնականություն ապահովելու նպատակը,

գիտակցելով քրեական հանցագործություններից հասարակության պաշտպանությանն ուղղված ընդհանուր քաղաքականություն ունենալու անհրաժեշտությունը,

հաշվի առնելով այն, որ ծանր հանցագործությունների դեմ պայքարը, որն օրեցօր միջազգային լուրջ խնդրի է վերածվում, միջազգային մակարդակով արդիական և արդյունավետ մեթոդների օգտագործում է պահանջում,

ընդունելով, որ այդ մեթոդներից մեկը հանցագործներին հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներից և միջոցներից զրկելն է,

հաշվի առնելով, որ նշված նպատակի իրագործման համար անհրաժեշտ է նաև հաստատել միջազգային համագործակցության արդյունավետ համակարգ,

հիմք ընդունելով Եվրոպայի խորհրդի «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին» կոնվենցիան (ETS հմ. 141, այսուհետ՝ 1990թ. Կոնվենցիա),

նկատի ունենալով նաև 2001թ. սեպտեմբերի 28-ին ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի կողմից ընդունված՝ ահաբեկչական գործողությունների հետևանքով միջազգային համերաշխության և անվտանգության համար սպառնալիքների մասին հմ. 1373 (2001) բանաձևը, մասնավորապես 3.դ պարբերությունը,

վկայակոչելով 1999թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի կողմից ընդունված «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» միջազգային կոնվենցիան, մասնավորապես 2-րդ և 4-րդ հոդվածները, որոնցով մասնակից Կողմերը պարտավորվում են ահաբեկչության ֆինանսավորումը սահմանել իբրև քրեական հանցանք,

գիտակցելով վերը նշված «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի

մասին» միջազգային կոնվենցիան վավերացնելուն և ամբողջությամբ իրագործելուն ուղղված անմիջական քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունը,

համաձայնեցին հետևյալի մասին.

ԲԱԺԻՆ I. ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Հոդված 1. Տերմինների օգտագործումը

Սույն Կոնվենցիայի նպատակների համար՝

ա) «Եկամուտներ» նշանակում է՝ քրեական հանցանքներ կատարելուց ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացված կամ ձեռք բերված ցանկացած տեսակի տնտեսական շահ: Այն կարող է բաղկացած լինել սույն հոդվածի «բ» ենթակետում սահմանված ցանկացած գույքից.

բ) «գույք»-ը ներառում է՝ ցանկացած նկարագրություն ունեցող գույք՝ ֆիզիկական կամ ոչ ֆիզիկական, շարժական կամ անշարժ, ինչպես նաև այդպիսի գույքի նկատմամբ իրավունքի կամ շահի մասին վկայող իրավական ակտեր կամ փաստաթղթեր.

գ) «գործիքներ» նշանակում է՝ ցանկացած գույք, որը նախատեսված է եղել կամ որևիցե ձևով օգտագործվել է, մասնակիորեն կամ ամբողջությամբ, մեկ կամ մի քանի քրեական հանցանք կատարելու համար.

դ) «բռնագրավում» նշանակում է՝ մեկ կամ մի քանի քրեական հանցանքի վերաբերյալ դատական գործ հարուցելուն հետևող և դատարանի կողմից սահմանվող պատիժ կամ պատժամիջոց, որը հանգեցնում է գույքի վերջնական կորստի.

ե) «նախորդող հանցանք» նշանակում է՝ ցանկացած տեսակի քրեական հանցանք, որի արդյունքում ստացված եկամուտները կարող են դառնալ սույն Կոնվենցիայի 9-րդ հոդվածով սահմանված հանցանքի առարկա.

զ) «Ֆինանսական հետախուզության մարմին» (այսուհետ՝ ՖՀՄ) նշանակում է՝ կենտրոնական ազգային գործակալություն, որը պատասխանատու է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի նպատակով՝

i) հանցավոր ծագում ունենալու մեջ կասկածվող եկամուտների և հնարավոր ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ կամ

ii) փողերի լվացման դեմ պայքարի ազգային օրենսդրությամբ կամ կանոնակարգերով պահանջվող

ֆինանսական տեղեկություններ ստանալու (թույլ տրված դեպքերում՝ նաև հայցելու), վերլուծելու և իրավասու մարմիններին փոխանցելու համար.

է) «սառեցում» կամ «առգրավում» նշանակում է՝ դատարանի կամ այլ իրավասու մարմնի կողմից տրված լիազորագրի հիման վրա՝ գույքի փոխանցման, ոչնչացման, փոխարկման, օտարման կամ տեղաշարժման ժամանակավոր արգելում կամ գույքի

նկատմամբ ժամանակավոր արգելանքի կամ հսկողության իրականացում.

ը) «ահաբեկչության ֆինանսավորում» նշանակում է՝ վերը նշված «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» միջազգային կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված գործողություններ:

ԲԱԺԻՆ II. ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Հոդված 2. Կոնվենցիայի կիրառումը ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի նպատակով

1. Կողմերից յուրաքանչյուրը պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք հնարավորություն կտան կիրառել սույն Կոնվենցիայի III, IV և V բաժիններով սահմանված դրույթները ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի նպատակով:
2. Մասնավորապես, Կողմերից յուրաքանչյուրը պետք է երաշխավորի, որ կարող է հետախուզել, հետապնդել, հայտնաբերել, ստուգել, առգրավել և բռնագրավել օրինական կամ հանցավոր ծագում ունեցող այնպիսի գույքը, որը նախատեսված է եղել կամ որևիցե ձևով օգտագործվել է, մասնակիորեն կամ ամբողջությամբ, ահաբեկչության ֆինանսավորման նպատակներով, ինչպես նաև նշված հանցանքից ստացված եկամուտները, և այդ ուղղությամբ ապահովել հնարավոր առավելագույն համագործակցություն:

ԲԱԺԻՆ III. ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՁԵՌՆԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ

ԵՆԹԱԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 3. Բռնագրավման միջոցներ

1. Կողմերից յուրաքանչյուրը պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս իրականացնելու գործիքների և եկամուտների, ինչպես նաև այդ եկամուտներին և լվացման ենթարկված գույքին համարժեք գույքի բռնագրավում:
2. Հաշվի առնելով այն, որ սույն հոդվածի 1-ին պարբերությունը վերաբերում է փողերի լվացմանը և սույն Կոնվենցիայի հավելվածի մեջ նշված հանցագործություններին, Կողմերից յուրաքանչյուրը կարող է ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին իր իրավական փաստաթուղթը ի պահ հանձնելիս Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարագրի միջոցով հայտարարել, որ սույն հոդվածի 1-ին պարբերությունը կիրառելի է.

ա) այն դեպքում, երբ հանցանքի համար իբրև պատժամիջոց սահմանված ազատազրկման կամ կալանքի առավելագույն ժամկետը գերազանցում է մեկ տարին: Սակայն տվյալ դրույթի վերաբերյալ Կողմերից յուրաքանչյուրը կարող է հանդես գալ

հարկային իրավախախտումներից ստացված եկամուտների բռնագրավման վերաբերյալ հայտարարությամբ, որպեսզի հնարավորություն ունենա իրականացնելու այդպիսի եկամուտների բռնագրավումը ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային համագործակցության միջոցով՝ հարկային պարտավորությունների մարման ազգային և միջազգային օրենսդրության ներքո, և/կամ

բ) միայն ցուցակով սահմանված հանցատեսակների նկատմամբ:

1. Կողմերը կարող են պարտադիր բռնագրավում սահմանել այն հանցատեսակների համար, որոնք ենթակա են բռնագրավման ռեժիմի: Կողմերը, մասնավորապես, կարող են այս դրույթը կիրառել փողերի լվացման, թմրամիջոցների անօրինական շրջանառության, թրաֆիկինգի և ցանկացած այլ ծանր հանցատեսակների նկատմամբ:
2. Կողմերից յուրաքանչյուրը պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք հնարավորություն կտան ազգային օրենսդրությամբ ծանր հանցագործություն համարվող մեկ կամ մի քանի արարք կատարած անձանցից պահանջել, որպեսզի նրանք ներկայացնեն բռնագրավման ենթակա եկամուտների կամ գույքի ծագման վերաբերյալ տեղեկություններ, եթե նման պահանջը համապատասխանում է տվյալ երկրի օրենսդրության սկզբունքներին:

Հոդված 4. Քննչական գործողություններ, նախնական միջոցներ

Կողմերից յուրաքանչյուրը պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել արագորեն հայտնաբերել, որոնել, ստեղծել կամ առգրավել 3-րդ հոդվածով նախատեսված՝ բռնագրավման ենթակա գույքը, որպեսզի, մասնավորապես, առավել հեշտ լինի իրականացնել հետագա բռնագրավումը:

Հոդված 5. Ստեղծում, առգրավում և բռնագրավում

Կողմերից յուրաքանչյուրը պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել ապահովել, որպեսզի ստեղծման, առգրավման և բռնագրավման միջոցառումները ներառեն նաև հետևյալը.

ա) այնպիսի գույք, որը ստացվել է եկամուտների փոխակերպման արդյունքում.

բ) օրինական աղբյուրներից ստացված գույքը (եթե եկամուտները միախառնվել են, մասնակիորեն կամ ամբողջությամբ, այդպիսի գույքի հետ)՝ համախառն եկամուտների գնահատված արժեքի չափով.

գ) այն շահույթը կամ շահը՝ եկամուտներին հավասարաչափ ձևով և չափով, որը ստացվել է եկամուտներից, եկամուտների փոխակերպման արդյունքում ստացված գույքից կամ այն գույքից, որին խառնվել են հանցագործությունից ստացված եկամուտները՝ այդ եկամուտների գնահատված արժեքի չափով:

Հոդված 6. Սառեցված կամ առգրավված գույքի տնօրինում

Կողմերից յուրաքանչյուրը պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնցով հնարավոր կլինի ապահովել, որ սույն Կոնվենցիայի 4-րդ և 5-րդ հոդվածներին համապատասխան սառեցված կամ առգրավված գույքը պատշաճ կերպով տնօրինվի:

Հոդված 7. Քննչական լիազորություններ և միջոցներ

1. Կողմերից յուրաքանչյուրը պետք է ընդունի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնցով իր դատարանները կամ այլ իրավասու մարմիններ կստանան լիազորություններ պահանջելու բանկային, ֆինանսական կամ առևտրային փաստաթղթերի տրամադրում կամ առգրավում՝ 3-րդ, 4-րդ և 5-րդ հոդվածներով սահմանված գործողություններն իրականացնելու նպատակով: Կողմը չի կարող հրաժարվել սույն հոդվածի դրույթներով սահմանված գործողություններն իրականացնելուց բանկային գաղտնիքի պատճառաբանությամբ:
2. Չխախտելով 1-ին պարբերությամբ սահմանված դրույթները՝ Կողմերից յուրաքանչյուրը պետք է ընդունի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որպեսզի նա.

ա) պարզի, թե արդյոք ֆիզիկական կամ իրավաբանական անձը հանդիսանում է իր տարածքում գտնվող որևիցե բանկում բացված ցանկացած տեսակի՝ մեկ կամ մի քանի հաշիվների օգտագործողը կամ շահառու սեփականատերը, իսկ հանդիսանալու դեպքում ձեռք բերի նույնականացված հաշիվների բոլոր տվյալները.

բ) ձեռք բերի այն սահմանված բանկային հաշիվների և բանկային գործարքների վերաբերյալ մանրամասները, որոնք իրականացվել են որոշակի ժամանակահատվածում, մեկ կամ մի քանի որոշակի հաշիվների միջոցով՝ ներառյալ այդ հաշիվներին փոխանցումներ կատարած և դրանցից փոխանցումներ ստացած այլ հաշիվների վերաբերյալ մանրամասները.

գ) մոնիտորինգի ենթարկի որոշակի ժամանակահատվածում մեկ կամ մի քանի նույնականացված հաշիվների միջոցով իրականացվող բանկային գործարքները, և

դ) ապահովի, որ բանկերը իրենց շահագրգիռ հաճախորդների կամ երրորդ անձանց համար չբացահայտեն «ա», «բ» և «գ» ենթակետերի համաձայն տեղեկատվություն որոնելու կամ ձեռք բերելու, ինչպես նաև հետաքննություն իրականացնելու փաստը:

Կողմերը պետք է քննարկեն նաև բանկ չհանդիսացող ֆինանսական հաստատություններում բացված հաշիվների վրա տվյալ դրույթը տարածելու հարցը:

3. Կողմերից յուրաքանչյուրը պետք է քննարկի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ ընդունելու հնարավորությունը, որոնք թույլ կտան կիրառել եկամուտների հայտնաբերումը և հետապնդումը, ինչպես նաև համապատասխան ապացույցների

հավաքագրումը հեշտացնող հատուկ քննչական միջոցներ, որոնցից են դիտարկումը, հեռահաղորդակցության գաղտնալսումը, մուտքը համակարգչային համակարգեր և որոշակի փաստաթղթեր ներկայացնելու պահանջը:

Հոդված 8. Իրավական պաշտպանության միջոցներ

Կողմերից յուրաքանչյուրը պետք է ընդունի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնցով հնարավոր կլինի ապահովել, որպեսզի այն շահագրգիռ կողմերը, որոնց առնչությամբ կիրառվել են 3-րդ, 4-րդ, 5-րդ հոդվածներով և սույն բաժնի այլ համապատասխան դրույթներով սահմանված միջոցները ունենան իրենց իրավունքների պաշտպանության արդյունավետ իրավամիջոցներ:

Հոդված 9. Փողերի լվացմանն առնչվող հանցատեսակներ

1. Կողմերից յուրաքանչյուրը պետք է ընդունի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնցով հնարավոր կլինի տվյալ երկրի օրենսդրության ներքո իբրև հանցատեսակ սահմանել դիտավորությամբ կատարված հետևյալ գործողությունները.

ա) գույքի փոխարկումը կամ փոխանակումը, եթե հայտնի է այդ գույքի եկամուտ հանդիսանալու փաստը՝ գույքի անօրինական ծագումը թաքցնելու կամ քողարկելու, ինչպես նաև նախորդող հանցատեսակի կատարման մեջ ներգրավված անձին իրավական հետևանքներից խուսափելու հարցում աջակցելու նպատակով.

բ) գույքի իրական բնույթի, աղբյուրի, գտնվելու վայրի, օտարման, փոխադրման, գույքի նկատմամբ որևիցե իրավունքի կամ սեփականատիրության թաքցնելը կամ քողարկելը, եթե հայտնի է այդ գույքի եկամուտ հանդիսանալու փաստը, և, իր սահմանադրական սկզբունքներին և իրավական համակարգի հիմնական հասկացություններին համապատասխան՝

գ) գույքի ձեռքբերումը, տիրապետումը կամ օգտագործումը՝ եթե ստանալու պահին հայտնի է եղել այդ գույքի եկամուտ հանդիսանալու փաստը,

դ) սույն հոդվածով սահմանված հանցանքներին կամ դրանց իրականացման փորձին մասնակցելը, միանալը կամ հանցավոր համաձայնության գալը, ինչպես նաև այդ հանցանքների իրականացմանն աջակցելը, դրդելը, նպաստելը կամ խորհրդակցելը:

2. Սույն հոդվածի 1-ին պարբերության իրագործման կամ կիրառման առումով՝

ա) չպետք է կարևորվի, թե արդյոք նախորդող հանցանքը սահմանված է տվյալ Կողմի քրեական օրենսդրությամբ.

բ) կարող է նախատեսվել, որ սույն պարբերության մեջ նշված հանցանքները չեն տարածվի նախորդող հանցանքը կատարած անձի նկատմամբ.

գ) սույն պարբերությամբ սահմանված հանցանքի համար իբրև պարտադիր

պայման հանդիսացող իմացության, դիտավորության կամ նպատակի վերաբերյալ եզրակացությունը կարող է արվել օբյեկտիվ, փաստացի հանգամանքներից ելնելով:

3. Կողմերից յուրաքանչյուրը կարող է ընդունել այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք հնարավորություն կտան իր երկրի օրենսդրության ներքո իբրև հանցանք սահմանել սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված բոլոր կամ մի քանի գործողությունները այն երկու դեպքերում կամ դեպքերից մեկում, երբ հանցագործը.

ա) կասկածել է, որ գույքը եկամուտ է հանդիսանում.

բ) պետք է ենթադրեր, որ գույքը եկամուտ է հանդիսանում:

4. Ելնելով նրանից, որ սույն հոդվածի 1-ին պարբերությունը կիրառվում է սույն Կոնվենցիայի հավելվածով սահմանված նախորդող հանցատեսակների նկատմամբ, պետություններից յուրաքանչյուրը կամ Եվրոպական համայնքը կարող է ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին իր իրավական փաստաթուղթը ի պահ հանձնելիս Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարագրի միջոցով հայտարարել, որ սույն հոդվածի 1-ին պարբերությունը կիրառելի է.

ա) այն դեպքում, երբ նախորդող հանցանքի համար իբրև պատժամիջոց սահմանված ազատազրկման կամ կալանավորման առավելագույն ժամկետը գերազանցում է մեկ տարին, իսկ այն Կողմերի համար, որոնց իրավական համակարգը հանցանքների համար սահմանում է ազատազրկման կամ կալանավորման նվազագույն ժամկետ, նշված դրույթը կիրառելի է այն դեպքում, երբ հանցանքի համար իբրև պատժամիջոց սահմանված ազատազրկման կամ կալանավորման նվազագույն ժամկետը գերազանցում է վեց ամիսը, և/կամ:

բ) միայն ցուցակով սահմանված հանցատեսակների նկատմամբ, և/կամ

գ) տվյալ Կողմի ազգային օրենսդրությամբ սահմանված ծանր հանցատեսակների նկատմամբ:

1. Կողմերից յուրաքանչյուրը պետք է հավաստիացնի, որ նախորդող հանցանքի համար նախկին կամ ներկա դատվածությունը նախապայման չէ փողերի լվացման համար դատապարտելու համար:
2. Կողմերից յուրաքանչյուրը պետք է հավաստիացնի, որ, սույն հոդվածի համաձայն, փողերի լվացման համար դատապարտումը հնարավոր է այն դեպքում, երբ ապացուցված է, որ սույն հոդվածի 1-ին կետի «ա» կամ «բ» ենթակետերում նշված գույքն ի հայտ է եկել նախորդող հանցանքի արդյունքում՝ առանց հանցանքը ճշգրիտ նշելու անհրաժեշտության:
3. Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապահովի, որ փողերի լվացման համար

նախորդող հանդիսացող հանցանքները ներառեն այն արարքները, որոնք տեղի են ունեցել մեկ այլ պետությունում, որտեղ դրանք հանցանք են համարվում, և կհամարվեն նախորդող հանցանք, եթե կատարված լինեին տվյալ երկրում: Կողմերից յուրաքանչյուրը կարող է իբրև միակ նախապայման սահմանել այն, որ արարքը տվյալ երկրում կատարված լինելու դեպքում կհամարվեր նախորդող հանցանք:

Հոդված 10. Կորպորատիվ պատասխանատվություն

1. Կողմերից յուրաքանչյուրը պետք է ընդունի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք կապահովեն, որ իրավաբանական անձինք պատասխանատվություն կրեն սույն Կոնվենցիայով սահմանված՝ փողերի վրացման քրեական հանցանքների համար, որոնք, ի շահ այդ անձանց, կատարվել են տվյալ իրավաբանական անձի կազմում առաջատար դիրք զբաղեցնող ֆիզիկական անձի կողմից, որը գործել է ինքնուրույն կամ իբրև իրավաբանական անձի մարմնի անդամ՝ օգտագործելով հետևյալը.

- ա) իրավաբանական անձը ներկայացնելու իրավասությունը, կամ
 - բ) իրավաբանական անձի անունից որոշումներ կայացնելու իրավասությունը, կամ
 - գ) իրավաբանական անձի կազմում հսկողություն իրականացնելու իրավասությունը,
- ինչպես նաև կատարվել են վերը նշված հանցանքներում այդպիսի ֆիզիկական անձին՝ իբրև հանցակից կամ սադրիչ ներգրավելու լինելու նպատակով:

1. 1-ին պարբերության մեջ նշված դեպքերի հետ մեկտեղ Կողմերից յուրաքանչյուրը պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ, որպեսզի ապահովի, որ իրավաբանական անձը պատասխանատվություն կրի այն դեպքերում, երբ 1-ին պարբերությամբ սահմանված հսկողության կամ վերահսկողության բացակայությունը հնարավոր է դարձրել 1-ին պարբերությամբ սահմանված քրեական հանցանքների կատարումը ի շահ տվյալ իրավաբանական անձի վերջինիս իրավասության տակ գտնվող ֆիզիկական անձի կողմից:
2. Սույն հոդվածով նախատեսված իրավաբանական անձի պատասխանատվությունը չպետք է բացառի քրեական գործի հարուցումը այն ֆիզիկական անձանց նկատմամբ, որոնք հանդիսանում են 1-ին պարբերությամբ սահմանված քրեական հանցանքներ կատարողներ, դրանց հրահրողներ կամ հանցակիցներ:
3. Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապահովի, որ սույն հոդվածով նախատեսված պատասխանատվությունը կրող իրավաբանական անձինք ենթարկվեն արդյունավետ, համարժեք և տարհամոզիչ քրեական կամ ոչ քրեական պատժամիջոցների, ներառյալ դրամական պատժամիջոցները:

Հողված 11. Նախկինում ընդունված որոշումներ

Կողմերից յուրաքանչյուրը պետք է ընդունի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք հնարավորություն կտան պատժամիջոց սահմանելիս հաշվի առնել այլ Կողմի՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձի նկատմամբ սույն Կոնվենցիայով սահմանված հանցանքների համար կայացրած դատավճիռները:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒՋՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆ (ՖՀՄ), ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Հողված 12. Ֆինանսական հետախուզության մարմին (ՖՀՄ)

Կողմերից յուրաքանչյուրը պետք է ընդունի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել սույն Կոնվենցիայով սահմանված ՖՀՄ ստեղծելու համար: Կողմերից յուրաքանչյուրը պետք է ընդունի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որպեսզի ՖՀՄ-ն հնարավորություն ունենա ուղղակի կամ անուղղակի ձևով, պատշաճ ժամանակին ձեռք բերելու այն ֆինանսական, վարչական և իրավական տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է իրեն իր գործառույթները, մասնավորապես, կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվությունների վերլուծությունը իրականացնելու համար:

Հողված 13. Փողերի լվացման կանխարգելմանն ուղղված միջոցներ

1. Կողմերից յուրաքանչյուրը պետք է ընդունի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել փողերի լվացման կանխարգելմանն ուղղված կարգավորման, վերահսկման կամ մոնիտորինգի համընդհանուր ներքին համակարգ հաստատելու համար, ինչպես նաև հաշվի առնի կիրառվող միջազգային չափանիշները՝ ներառելով, մասնավորապես, փողերի լվացման դեմ պայքարի ֆինանսական միջոցառումների հատուկ հանձնախմբի (FATF) ընդունած առաջարկները:
2. Այդ նպատակով Կողմերից յուրաքանչյուրը պետք է ընդունի, մասնավորապես, այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք հնարավորություն կտան.

ա) պահանջել իրավաբանական և ֆիզիկական անձանցից, որոնք ներգրավված են փողերի լվացման նպատակներով առավել հաճախակի իրականացվող գործունեության մեջ, իրենց գործունեության շրջանակներում կատարել հետևյալը.

i. պարզել և հաստատել իրենց հաճախորդների ինքնությունը և համապատասխան դեպքերում վերջնական շահը տնօրինող շահառու սեփականատերերին, ինչպես նաև իրականացնել գործարար հարաբերությունների մշտական պատշաճ ուսումնասիրություն՝ կիրառելով ռիսկայնության գնահատման մոտեցումը.

ii. գեկուցել փողերի լվացման վերաբերյալ կասկածների մասին՝ կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու համար.

iii. ձեռնարկել լրացուցիչ միջոցներ, ինչպիսիք են հաճախորդների նույնականացման և գործարքների վերաբերյալ փաստաթղթերի պահպանումը, անձնակազմի ուսուցումը և ներքին կանոնակարգերի ու ընթացակարգերի հաստատումը, և անհրաժեշտության դեպքում դրանք փոփոխել ըստ իրենց գործունեության բնույթի և ծավալի.

բ) արգելել, համապատասխան դեպքերում, «ա» ենթակետում նշված անձանց, որ նրանք բացահայտեն կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն կամ անհրաժեշտ տեղեկություններ ներկայացնելու փաստը կամ այն փաստը, որ փողերի լվացման առնչությամբ իրականացվում է կամ կարող է իրականացվել հետաքննություն.

գ) ապահովել, որ «ա» ենթակետում նշված անձինք ենթակա լինեն մոնիտորինգի արդյունավետ համակարգերի, իսկ անհրաժեշտության դեպքում վերահսկման, փողերի լվացման դեմ պայքարի պահանջներին նրանց համապատասխանելիությունն ապահովելու նպատակով՝ համապատասխան դեպքերում հիմք ընդունելով դիսկալնության գնահատման սկզբունքը:

3. Այդ նպատակով Կողմերից յուրաքանչյուրը պետք է ընդունի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք հնարավորություն կտան հայտնաբերել զգալի քանակությամբ կանխիկ դրամի և համապատասխան ներկայիչ փոխանցելի փաստաթղթերի՝ երկրից դուրս ֆիզիկական փոխադրումը:

Հոդված 14. Կասկածելի ներքին գործարքների հետաձգում

Կողմերից յուրաքանչյուրը պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք թույլ կտան ՖՀՄ-ին կամ, համապատասխան դեպքերում, որևիցե այլ լիազորված իշխանության կամ մարմնի, երբ կասկած է առաջանում փողերի լվացման հետ տվյալ գործարքի առնչության վերաբերյալ, ձեռք առնել շտապ գործողություններ, որպեսզի գործարքը ժամանակավորապես դադարեցվի կամ կասեցվի՝ այն վերլուծելու և կասկածը հաստատելու նպատակով: Կողմերից յուրաքանչյուրը կարող է սահմանափակում անել և այդ միջոցը կիրառել այն դեպքերում, երբ ներկայացվել է կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն: Գործարքի դադարեցման կամ կասեցման առավելագույն տևողությունը պետք է սահմանվի ազգային օրենսդրության համապատասխան դրույթներով:

ԲԱԺԻՆ IV. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԵՆԹԱԲԱԺԻՆ 1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 15. Միջազգային համագործակցության ընդհանուր սկզբունքները և միջոցները

1. Կողմերը պետք է հնարավորության դեպքում առավելագույն չափով համագործակցեն միմյանց հետ՝ ելնելով գործիքների և եկամուտների բռնագրավմանն ուղղված հետաքննության և դատական վարույթների նպատակներից:
2. Կողմերից յուրաքանչյուրը պետք է ընդունի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք հնարավորություն կտան սույն բաժնով նախատեսված պայմանների ներքո կատարել հետևյալ հարցումները.

ա) եկամուտներ կամ գործիք հանդիսացող գույքի որոշակի միավորների բռնագրավման վերաբերյալ, ինչպես նաև եկամուտների այնպիսի բռնագրավման վերաբերյալ, որը բաղկացած է եկամուտների արժեքին համապատասխան գումար վճարելու պահանջից.

բ) հետաքննության ընթացքում աջակցության և նախնական միջոցների վերաբերյալ՝ վերը նշված «ա» կետով նախատեսված բռնագրավման տեսակներից որևէ մեկը հետագայում իրականացնելու նպատակով:

1. 2-րդ կետի «բ» պարբերությամբ նախատեսված՝ հետաքննության ընթացքում աջակցությունը և նախնական միջոցները պետք է իրականացվեն այնքանով, որքանով թույլատրելի են և համապատասխանում են հարցում ստացող Կողմի ներքին օրենսդրությանը: Այն դեպքում, երբ նշված միջոցներից որևէ մեկի վերաբերյալ հարցման մեջ նշված են հարցում ներկայացնող Կողմի օրենսդրությամբ պահանջվող ձևակերպումները կամ ընթացակարգերը, եթե նույնիսկ դրանք անձանոթ են հարցումը ստացող Կողմին, վերջինս պետք է կատարի այդ հարցումներում պարունակվող պահանջը այնքանով, որքանով հայցվող գործողությունը չի հակասում իր օրենսդրության հիմնարար սկզբունքներին:
2. Կողմերից յուրաքանչյուրը պետք է ընդունի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որպեսզի եկամուտներ և գործիքներ հայտնաբերելու, որոնելու, ստեղծելու կամ առգրավելու նպատակով այլ Կողմերի ներկայացրած հարցումներին տրվի այնքան առաջնայնություն, որքան տրվում է ներքին ընթացակարգերի շրջանակներում կատարվող հարցումներին:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 2. ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 16. Աջակցելու պարտավորությունը

Կողմերը հարցում ստանալիս պետք է հնարավորության դեպքում միմյանց տրամադրեն առավելագույն աջակցություն բռնագրավման ենթակա գործիքների, եկամուտների և այլ գույքի հայտնաբերման և որոնման համար: Այդպիսի աջակցությունը պետք է ներառի վերը նշված գույքի առկայության, գտնվելու վայրի, փոխադրման, բնույթի, իրավական կարգավիճակի կամ արժեքի վերաբերյալ փաստերի տրամադրման և պահպանման համար անհրաժեշտ ցանկացած միջոցառում:

Հոդված 17. Բանկային հաշիվների վերաբերյալ տեղեկատվությանն առնչվող հարցումներ

1. Կողմերից յուրաքանչյուրը մեկ այլ Կողմից հարցում ստանալու դեպքում պետք է ձեռնարկի, սույն հոդվածով սահմանված պայմաններին համապատասխան, անհրաժեշտ միջոցներ, որպեսզի պարզի, թե արդյո՞ք դատական հետաքննության սուբյեկտ ֆիզիկական կամ իրավաբանական անձը տնօրինում կամ վերահսկում է իր տարածքում գտնվող որևիցե բանկում բացված ցանկացած տեսակի մեկ կամ մի քանի հաշիվներ, իսկ տնօրինելու կամ վերահսկելու դեպքում տրամադրի նույնականացված հաշիվների մանրամասները:
2. Սույն հոդվածով սահմանված պարտավորությունը պետք է կատարվի այնքանով, որքանով հաշիվը պահող բանկը տիրապետում է այդ տեղեկատվությանը:
3. 37-րդ հոդվածով սահմանված պահանջների հետ մեկտեղ հարցում ներկայացնող Կողմը հարցման մեջ պետք է.

ա) ձևակերպի, թե ինչու է համարում, որ հայցվող տեղեկատվությունը կարող է զգալի արժեք ունենալ տվյալ հանցանքի դատական քննության համար.

բ) ձևակերպի, թե ինչ հիմքեր կամ ենթադրելու, որ հաշիվն առկա է հայցվող Կողմի բանկերում, և հնարավորության դեպքում առավելագույն մանրամասնությամբ նշի, թե որ բանկերը և/կամ հաշիվները կարող են ներգրավված լինել, և

գ) ներառի ցանկացած տեսակի լրացուցիչ տեղեկատվություն, որը կարող է հեշտացնել հարցման իրագործումը:

1. Հարցում ստացող Կողմը կարող է այդպիսի հարցման բավարարման համար սահմանել այն նույն պայմանները, որոնք ինքը կիրառում է հետախուզման և առգրավման հարցումների դեպքում:

2. Պետություններից յուրաքանչյուրը կամ Եվրոպական համայնքը կարող է ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին իր իրավական փաստաթուղթը ի պահ հանձնելիս Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարագրի միջոցով հայտարարել, որ սույն հոդվածը կիրառելի է միայն սույն Կոնվենցիայի հավելվածում մասնավորեցված հանցատեսակների նկատմամբ: Կողմերը կարող են սույն դրույթի կիրառումը տարածել բանկ չհանդիսացող ֆինանսական հաստատություններում բացված հաշիվների վրա: Դրույթի տարածումը կարող է իրականացվել փոխադարձության սկզբունքի հիման վրա:

Հոդված 18. Բանկային գործարքների վերաբերյալ տեղեկատվությանն առնչվող հարցումներ

1. Այլ Կողմից ստացված հարցման հիման վրա հարցում ստացող Կողմը պետք է տրամադրի որոշակի բանկային հաշիվների և հարցման մեջ նշված մեկ կամ մի քանի հաշիվների միջոցով որոշակի ժամանակահատվածում իրականացված բանկային գործարքների վերաբերյալ մանրամասներ՝ ներառյալ փոխանցող և ստացող բոլոր հաշիվների մանրամասները:
2. Սույն հոդվածով սահմանված պարտավորությունը պետք է կատարվի այն չափով, որքանով հաշիվը պահող բանկը տիրապետում է այդ տեղեկատվությանը:
3. 37-րդ հոդվածով սահմանված պահանջների հետ մեկտեղ հարցում ներկայացնող Կողմը պետք է հարցման մեջ նշի, թե ինչու է համարում, որ հայցվող տեղեկատվությունն էապես առնչվում է տվյալ հանցանքի դատական քննությանը:
4. Հարցում ստացող Կողմը կարող է այդպիսի հարցման իրագործման համար սահմանել այն նույն պայմանները, որոնք կիրառում է հետախուզման և առգրավման հարցումների նկատմամբ:
5. Կողմերը կարող են այս դրույթի կիրառումը տարածել բանկ չհանդիսացող ֆինանսական հաստատություններում բացված հաշիվների վրա: Դրույթի տարածումը կարող է իրականացվել փոխադարձության սկզբունքի հիման վրա:

Հոդված 19. Բանկային գործարքների մոնիտորինգի վերաբերյալ հարցումներ

1. Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապահովի, որ մեկ այլ Կողմից հարցում ստանալու դեպքում ի վիճակի կլինի մոնիտորինգի ենթարկել հարցման մեջ նշված մեկ կամ մի քանի հաշիվների միջոցով որոշակի ժամանակահատվածում իրականացվող բանկային գործարքները և դրա արդյունքները հաղորդել հարցում ներկայացնող Կողմին:
2. 37-րդ հոդվածով սահմանված պահանջների հետ մեկտեղ հարցում ներկայացնող Կողմը պետք է հարցման մեջ նշի, թե ինչու է համարում, որ հայցվող տեղեկատվությունն էապես առնչվում է տվյալ հանցանքի դատական քննությանը:

3. Յուրաքանչյուր առանձին դեպքում մոնիտորինգ իրականացնելու վերաբերյալ որոշումը պետք է ընդունեն հարցումը ստացած Կողմի իրավասու մարմինները՝ տվյալ Կողմի ազգային օրենսդրության հիման վրա:
4. Մոնիտորինգի հետ կապված գործնական մանրամասները պետք է համաձայնեցվեն հարցումը ներկայացնող և ստացող Կողմերի իրավասու մարմինների միջև:

Կողմերը կարող են այս դրույթի կիրառումը տարածել բանկ չհանդիսացող ֆինանսական հաստատություններում բացված հաշիվների վրա:

Հոդված 20. Տեղեկատվության ինքնակամ փոխանցումը

Չխախտելով հետաքննության կամ դատական վարույթի իր սեփական ընթացակարգերը՝ ցանկացած Կողմ կարող է, առանց նախապես հարցում ստանալու, մյուս Կողմին փոխանցել գործիքների և եկամուտների վերաբերյալ տեղեկատվությունը այն դեպքում, երբ համարում է, որ այդպիսի տեղեկատվության բացահայտումը կարող է տեղեկատվությունը ստացող Կողմին օգնել հետաքննություն կամ դատական վարույթ սկսելու կամ իրականացնելու հարցում կամ կարող է հանգեցնել այդ Կողմի՝ սույն բաժնով նախատեսված հարցման ներկայացմանը:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 3. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հոդված 21. Նախնական միջոցներ ձեռնարկելու պարտավորությունը

1. Քրեական դատավարություն կամ բռնագրավման նպատակով դատական վարույթ հարուցած Կողմի խնդրանքով ցանկացած Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ նախնական միջոցներ, որոնցից են սառեցումը կամ առգրավումը, որպեսզի կանխի այնպիսի գույքի առքուվաճառքը, փոխանցումը կամ տնօրինումը, որը հետագայում կարող է բռնագրավման հարցման առարկա հանդիսանալ կամ այդպիսին դառնալ՝ հարցման պահանջը բավարարելու համար:
2. 23-րդ հոդվածով նախատեսված բռնագրավման մասին հարցում ստացող Կողմը պետք է, եթե առկա է այդպիսի պահանջ, ձեռնարկի սույն հոդվածի 1-ին կետով նշված միջոցները ցանկացած այնպիսի գույքի նկատմամբ, որը բռնագրավման հարցման առարկա է հանդիսանում կամ կարող է այդպիսին դառնալ՝ հարցման պահանջը բավարարելու համար:

Հոդված 22. Նախնական միջոցների կիրառումը

1. 21-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան հայցված նախնական միջոցները կիրառելուց հետո հարցում ներկայացնող Կողմը պետք է ինքնակամորեն և հնարավորին չափ կարճ ժամկետներում հարցում ստացող Կողմին տրամադրի այն բոլոր տեղեկությունները, որոնք կարող են կասկածի ենթարկել կամ փոփոխել այդ միջոցների իրականացման աստիճանը: Հարցում ներկայացնող Կողմը պետք է

նաև հարցում ստացող Կողմին անհապաղ տրամադրի պահանջվող բոլոր լրացուցիչ տվյալները, որոնք անհրաժեշտ են նախնական միջոցների իրականացման և հետագա գործողությունների համար:

Սույն հոդվածին համապատասխան կիրառված ցանկացած նախնական միջոց դադարեցնելուց առաջ հարցում ստացող Կողմը պետք է հնարավորության դեպքում հարցում ներկայացնող Կողմին հնարավորություն տա ներկայացնելու միջոցի կիրառումը շարունակելու օգտին իր հիմնավորումները:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 4. ԲՈՆԱԳՐԱՎՈՒՄ

Հոդված 23. Բռնագրավում իրականացնելու պարտավորությունը

1. Այն Կողմը, որը մեկ այլ Կողմից ստացել է իր տարածքում գտնվող գործիքների կամ եկամուտների բռնագրավման վերաբերյալ հարցում, պետք է.

ա) կիրառի (ի կատար ածի) այդպիսի գործիքների կամ եկամուտների բռնագրավման վերաբերյալ հարցում ներկայացնող Կողմի դատարանից ստացված օրդերը, կամ

բ) ներկայացնի հարցումը իր իրավասու մարմիններին՝ բռնագրավման լիազորագիր ձեռք բերելու նպատակով, իսկ այդպիսի լիազորագիր տրվելու դեպքում՝ ի կատար ածի այն:

1. Սույն հոդվածի 1.բ կետը կիրառելու նպատակներից ելնելով՝ Կողմերից յուրաքանչյուրը անհրաժեշտության դեպքում պետք է իրավասու լինի իր սեփական օրենսդրության ներքո հարուցելու բռնագրավման վերաբերյալ դատական վարույթ:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները պետք է կիրառվեն նաև այնպիսի բռնագրավման վերաբերյալ, որը ներառում է եկամուտների արժեքին համապատասխան գումար վճարելու պահանջ՝ այն դեպքում երբ գույքը, որի նկատմամբ կարող է բռնագրավում իրականացվել, գտնվում է հարցում ստացող Կողմի տարածքում: Նման դեպքերում 1-ին կետի համաձայն բռնագրավում իրականացնելիս հարցում ստացող Կողմը պետք է գումարը չստանալու դեպքում իրագործի այդ պահանջը՝ տարածելով այն այդ նպատակի համար առկա ցանկացած գույքի վրա:

3. Եթե բռնագրավման վերաբերյալ հարցումը վերաբերում է գույքի որոշակի միավորի, Կողմերը կարող են համաձայնություն ձեռք բերել այն մասին, որ հարցում ստացող Կողմը կարող է բռնագրավում կատարել գույքի արժեքին համապատասխան գումարի վճարման պահանջի ձևով:

4. Կողմերը պետք է հնարավորության դեպքում, իրենց երկրի օրենսդրության ներքո, առավելագույն չափով համագործակցեն այն Կողմերի հետ, որոնք պահանջում են

կիրառել գույքի կորստին հանգեցնող՝ բռնագրավմանը համարժեք այնպիսի միջոցներ, որոնք քրեական պատժամիջոցներ չեն հանդիսանում, այն չափով, որքանով այդ միջոցները քրեական հանցանքի նկատմամբ կիրառելու համար սահմանված են հարցում ներկայացնող Կողմի դատական մարմնի կողմից, այն պայմանով, որ հաստատված լինի, որ այդ գույքը կազմված է սույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածով սահմանված եկամուտներից կամ այլ գույքից:

Հոդված 24. Բռնագրավման իրականացումը

1. 23-րդ հոդվածի ներքո բռնագրավման իրավունքն ստանալու և իրականացնելու ընթացակարգերը պետք է կարգավորվեն հարցում ստացող Կողմի օրենսդրությամբ:
2. Հարցում ստացող Կողմը պարտավոր է ընդունել փաստերի առնչությամբ կատարված եզրահանգումները այնքանով, որքանով դրանք նշված են հարցում ներկայացնող Կողմի մեղադրական դատավճռի կամ դատարանի որոշման մեջ, կամ այնքանով, որքանով դրանք անվերապահորեն հիմք են հանդիսանում այդպիսի մեղադրական դատավճռի կամ դատարանի որոշման համար:
3. Պետություններից յուրաքանչյուրը կամ Եվրոպական համայնքը կարող է ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին իր իրավական փաստաթուղթը ի պահ հանձնելիս Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարագրի միջոցով հայտարարել, որ սույն հոդվածի 2-րդ կետը կիրառելի է միայն իր սահմանադրական սկզբունքներին և իրավական համակարգի հիմնական հասկացություններին համապատասխանելու դեպքում:
4. Այն դեպքում, երբ բռնագրավումը ներառում է գումար վճարելու պահանջ, հարցում ստացող Կողմի իրավասու մարմինը պետք է փոխանակի գումարը այդ Կողմի արժույթով՝ բռնագրավումն իրականացնելու վերաբերյալ որոշում ընդունելու պահի դրությամբ սահմանված փոխարժեքին համապատասխան:
5. 23-րդ հոդվածի 1.ա կետի դեպքում միայն հարցում ներկայացնող Կողմը պետք է իրավասու լինի որոշում կայացնելու բռնագրավման լիազորագիրը վերանայելու նպատակով որևիցե դիմում ներկայացնելու վերաբերյալ:

Հոդված 25. Բռնագրավված գույքը

1. Սույն Կոնվենցիայի 23-րդ և 24-րդ հոդվածների համաձայն Կողմերից որևէ մեկի բռնագրավված գույքը պետք է տնօրինի այդ Կողմը՝ իր երկրի օրենսդրության և վարչական ընթացակարգերին համապատասխան:
2. Սույն Կոնվենցիայի 23-րդ և 24-րդ հոդվածների համաձայն որևէ Կողմի

ներկայացրած հարցումը կատարելիս Կողմերը պետք է իրենց երկրի օրենսդրությամբ թույլատրելի չափով և համապատասխան պահանջ ստանալու դեպքում առաջնայնության կարգով քննարկեն բռնագրավված գույքը հարցում ներկայացնող Կողմին վերադարձնելու հարցը, որպեսզի նա կարողանա փոխհատուցում տրամադրել հանցագործության զոհ դարձած անձանց կամ այդ գույքը վերադարձնել օրինական սեփականատերերին:

3. Սույն Կոնվենցիայի 23-րդ և 24-րդ հոդվածների համաձայն որևէ Կողմի ներկայացրած հարցումը կատարելիս հակառակ Կողմը կարող է հատուկ կարգով քննարկել այդպիսի գույքը պարբերաբար կամ առանձին դեպքերում այլ Կողմերի հետ բաժանելու մասին համաձայնագրեր կամ պայմանավորվածություններ ունենալու հարցը՝ իր երկրի օրենսդրությանը կամ վարչական ընթացակարգերին համապատասխան:

Հոդված 26. Բռնագրավում իրականացնելու իրավունքը, բռնագրավման առավելագույն գումարը

1. 23-րդ և 24-րդ հոդվածների համաձայն ներկայացված բռնագրավման հարցումը չի խախտում հարցում ներկայացրած Կողմի՝ բռնագրավման լիազորագիրն ինքնուրույն կիրառելու իրավունքը:
2. Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չպետք է մեկնաբանվի այնպես, թե թույլատրելի է, որ բռնագրավման ամբողջ արժեքը գերազանցի բռնագրավման լիազորագրում նշված գումարի արժեքը: Եթե Կողմերից որևէ մեկը գտնում է, որ դա կարող է լինել, ապա շահագրգիռ Կողմերը պետք է խորհրդակցեն միմյանց հետ՝ նման երևույթը բացառելու համար:

Հոդված 27. Պայմանական ազատազրկում (դատարան չներկայանալու պատճառով)

23-րդ հոդվածում նշված հարցման արդյունքում հարցում ստացող Կողմը չպետք է կիրառի պայմանական ազատազրկում կամ անձի ազատությունը սահմանափակող այլ միջոցներ, եթե հարցում ներկայացրած Կողմը այդ մասին նշել է հարցման մեջ:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 5. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՐԺՈՒՄ ԿԱՄ ՀԵՏԱՁԳՈՒՄ

Հոդված 28. Մերժման հիմքերը

1. Սույն բաժնով նախատեսված համագործակցությունը կարող է մերժվել, եթե.
 - ա) հայցվող գործողությունը հակասում է հարցում ստացող Կողմի իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին, կամ
 - բ) հարցման պահանջի կատարումը կարող է որևէ կերպ սպառնալ հարցում ստացող Կողմի ինքնիշխանությունը, անվտանգությունը, հասարակական կարգը կամ

այլ էական շահերը, կամ

գ) հարցում ստացող Կողմի կարծիքով՝ հայցվող գործողությունների ձեռնարկումը արդարացված չէ հարցման մեջ նշված դեպքի առնչությամբ, կամ

դ) հարցման մեջ նշված հանցանքը ֆինանսահարկային իրավախախտում է՝ բացառությամբ ահաբեկչության ֆինանսավորման դեպքի,

ե) հարցման մեջ նշված հանցանքը քաղաքական իրավախախտում է՝ բացառությամբ ահաբեկչության ֆինանսավորման դեպքի, կամ

զ) հարցում ստացած Կողմը գտնում է, որ հայցվող գործողության կատարումը կհակասի *ne bis in idem* սկզբունքին, կամ

է) հարցման մեջ նշված իրավախախտումը, հարցումը ստացած Կողմի օրենսդրության համաձայն, հանցագործություն չէր համարվի եթե կատարված լիներ այդ Կողմի տարածքում: Սակայն մերժման այդ հիմքը 2-րդ բաժնով նախատեսված համագործակցության նկատմամբ կիրառելի է այնքանով, որքանով հայցվող աջակցությունը ներառում է հարկադիր գործողություն: Այն դեպքում, երբ սույն բաժնով նախատեսված համագործակցության համար պահանջվում է երկակի քրեականացում, այդ պահանջը պետք է համարվի բավարարված՝ անկախ նրանից՝ երկու Կողմերը այդ իրավախախտումը դատում են հանցանքների միևնույն կատեգորիայում կամ հանցանքը որակում են միևնույն տերմիններով, թե ոչ՝ այն պայմանով, որ երկու Կողմերն էլ քրեականացնում են հանցանքի հիմքում ընկած արարքը:

1. Սույն բաժնի 2-րդ ենթաբաժնով նախատեսված համագործակցությունը, այնքանով, որքանով հայցվող աջակցությունը ներառում է հարկադիր գործողություն, ինչպես նաև 3-րդ բաժնով սահմանված համագործակցությունը նույնպես կարող են մերժվել, եթե հետաքննության կամ դատավարության նպատակների համար հայցվող միջոցները, ըստ հարցում ստացած Կողմի երկրի օրենսդրության, հնարավոր չէր լինի ձեռնարկել մեկ այլ համանման գործի նկատմամբ, որը կքննվեր տվյալ երկրում:
2. Հարցում ստացող Կողմի օրենսդրությամբ պահանջվելու դեպքում սույն բաժնի 2-րդ ենթաբաժնով նախատեսված համագործակցությունը, այնքանով, որքանով հայցվող աջակցությունը ներառում է հարկադիր գործողություն, ինչպես նաև 3-րդ բաժնով սահմանված համագործակցությունը նույնպես կարող են մերժվել, եթե հայցվող միջոցները կամ համանման ազդեցություն ունեցող այլ միջոցները թույլատրելի չեն հարցում ներկայացնող Կողմի օրենսդրությամբ, կամ, եթե հարցումը վերաբերում է ներկայացնող Կողմի իրավասու մարմիններին, հարցումը լիազորված չէ դատավորի կամ որևէ այլ դատական մարմնի կողմից, ներառյալ հանրային դատախազությունը, որոնք ունեն քրեական հանցանքների ոլորտին առնչվող իրավասություններ:
3. Սույն բաժնի 4-րդ ենթաբաժնով նախատեսված համագործակցությունը կարող է

մերժվել նաև, եթե.

ա) հարցում ստացող Կողմի օրենսդրությամբ հարցման մեջ նշված հանցատեսակի համար բռնագրավում չի նախատեսվում, կամ

բ) չխախտելով 23-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պարտավորությունը՝ այն կհակասեր հարցում ստացող Կողմի՝ բռնագրավման սահմանափակումներին առնչվող ներքին օրենսդրության սկզբունքներին հանցանքի և հետևյալի հարաբերակցության իմաստով՝

i) տնտեսական շահը, որը կարող է որակվել իբրև այդ հանցանքի եկամուտ, կամ

ii) գույքը, որը կարող է որակվել իբրև այդ հանցանքի գործիք, կամ

գ) հարցում ստացող Կողմի օրենսդրության համաձայն՝ բռնագրավում այլևս չի կարող սահմանվել կամ իրականացվել վաղեմության ժամկետը լրանալու պատճառով, կամ

դ) չխախտելով 23-րդ հոդվածի 5-րդ կետը՝ հարցումը չի վերաբերում նախորդող դատավճռին կամ դատական բնույթի որոշմանը կամ այդպիսի որոշման մեջ ներառված պնդմանն առ այն, որ տեղի է ունեցել մեկ կամ մի քանի հանցանք, որի հիման վրա տրվել է բռնագրավում իրականացնելու լիազորագիր կամ այդպիսի բռնագրավում է հայցվել, կամ

ե) հարցում ներկայացնող Կողմի երկրում բռնագրավումն իրագործելի չէ, կամ այն դեռևս ենթակա է բողոքարկման սովորական միջոցների, կամ

զ) հարցումը վերաբերում է բռնագրավման լիազորագրին, որը տրվել է այն անձի բացակայությամբ հրապարակված որոշման հիման վրա, որի նկատմամբ սահմանվել է բռնագրավումը, և, ըստ հարցում ստացող Կողմի, հարցում ներկայացնող Կողմի իրականացրած և այդպիսի որոշման հանգեցրած դատավարության ընթացքում չեն ապահովվել քրեական հանցանքի մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի համար վերապահված պաշտպանության նվազագույն իրավունքները:

5. Սույն հոդվածի 4.գ կետի նպատակներով որոշումը անձի բացակայությամբ չի համարվում ընդունված, եթե.

ա) այն հաստատվել կամ հրապարակվել է շահագրգիռ անձի առարկությունից հետո, կամ

բ) այն հրապարակվել է բողոքարկումից հետո՝ այն պայմանով, որ բողոքարկումը ներկայացված է եղել շահագրգիռ անձի կողմից:

1. Սույն հոդվածի 4.գ կետի նպատակներով պաշտպանության նվազագույն իրավունքները պահպանված լինելու հարցը քննարկելիս հարցում ստացող Կողմը պետք է հաշվի առնի այն փաստը, թե արդյոք շահագրգիռ անձը միտումնավոր

կերպով փորձել է խուսափել արդարադատությունից, ինչպես նաև այն, թե արդյոք այդ անձը, հնարավորություն ունենալով դիմել դատարան իր բացակայությամբ կայացված որոշումը բողոքարկելու հարցով, նախընտրել է դա չանել: Նույնը կիրառելի է այն դեպքերում, երբ շահագրգիռ անձը պատշաճ կերպով դատական ծանուցագիր ստանալուց հետո նախընտրել է չներկայանալ դատարան և չի խնդրել հարցը հետաձգել:

2. Կողմը չպետք է բանկային գաղտնիքը հիմք համարի՝ սույն բաժնով նախատեսված համագործակցությունը մերժելու համար: Ներքին օրենսդրությամբ պահանջվելու դեպքում Կողմը կարող է պահանջել, որ համագործակցության վերաբերյալ հարցման կատարումը, որը կներառի բանկային գաղտնիքի բացահայտում, լիազորված լինի դատավորի կամ որևիցե այլ դատական մարմնի կողմից, ներառյալ հանրային դատախազությունը, որոնք ունեն քրեական հանցանքների ոլորտին առնչվող իրավասություններ:

8. Չխախտելով սույն հոդվածի 1.ա կետով նշված մերժման հիմքերը՝

ա) այն փաստը, որ հետաքննության ենթարկված անձը կամ այն անձը, ում նկատմամբ պետք է կիրառվի հարցում ներկայացնող Կողմի իշխանությունների կողմից տրված բռնագրավման լիազորագիր, հանդիսանում է իրավաբանական անձ, չպետք է խոչընդոտի, ըստ հարցում ստացող Կողմի, սույն բաժնով նախատեսված համագործակցությունն իրականացնելուն:

բ) այն փաստը, որ ֆիզիկական անձը, ում նկատմամբ տրվել է եկամուտների բռնագրավման օրդեր, մահացել է, կամ այն փաստը, որ իրավաբանական անձը, որի նկատմամբ տրվել է եկամուտների բռնագրավման օրդեր, հետագայում լուծարվել է, 23-րդ հոդվածի 1.ա կետի համաձայն աջակցություն տրամադրելու համար չպետք է լինի խոչընդոտ:

գ) այն փաստը, որ հետաքննության ենթարկված անձը կամ այն անձը, ում նկատմամբ պետք է կիրառվի հարցում ներկայացնող Կողմի իշխանությունների կողմից տրված բռնագրավման հրամանը, հարցման մեջ նշված է և՛ իբրև հիմք հանդիսացող քրեական հանցանքի, և՛ իբրև փողերի լվացման հանցանքի հեղինակ, սույն Կոնվենցիայի 9.2.բ կետի համաձայն, չպետք է լինի, ըստ հարցում ստացող Կողմի, սույն բաժնով նախատեսված համագործակցությունն իրականացնելու համար խոչընդոտ:

Հոդված 29. Հետաձգում

Հարցում ստացող Կողմը կարող է հետաձգել հարցման առնչությամբ գործողությունների ձեռնարկումը, եթե այդ գործողությունները կարող են վնասել իր իշխանությունների կողմից իրականացվող հետաքննությանը կամ դատավարությանը:

Հոդված 30. Հարցման պահանջի մասնակի կամ պայմանական բավարարում

Նախքան սույն բաժնով նախատեսված համագործակցությունը մերժելը կամ

հետաձգելը հարցում ստացող Կողմը պետք է, համապատասխան դեպքերում, հարցում ներկայացնող Կողմի հետ խորհրդակցելուց հետո քննարկի, թե արդյոք հարցումը կարող է բավարարվել մասնակի կերպով կամ իր կողմից անհրաժեշտ համարվող պայմանների առկայությամբ:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 6. ԵՐՐՈՐԴ ԿՈՂՄԵՐԻՆ ԾԱՆՈՒՑԵԼԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 31. Փաստաթղթերի միջոցով ծանուցում

1. Կողմերը պետք է միմյանց ապահովեն փոխադարձ աջակցության լայն միջոցներով՝ նախնական միջոցների և բռնագրավման ենթակա անձանց դատական փաստաթղթերով ապահովելու համար:
2. Սույն հոդվածում պարունակվող և ո՛չ մի դրույթ չպետք է որևէ կերպ ազդի հետևյալի վրա.

ա) արտասահմանում գտնվող անձանց փոստային ուղիներով դատական փաստաթղթեր ուղղակիորեն առաքելու հնարավորությունը.

բ) նախաձեռնող Կողմի դատական աշխատակիցների, պաշտոնյաների կամ այլ իրավասու մարմինների հնարավորությունը՝ դատական փաստաթղթերի առաքումը ուղղակիորեն այդ Կողմի հյուպատոսական մարմինների կամ նշանակման Կողմի դատական աշխատակիցների, պաշտոնյաների կամ այլ իրավասու մարմինների միջոցով իրականացնելու առումով,

բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակման Կողմը ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին իր իրավական փաստաթուղթը ի պահ հանձնելիս հակառակի հայտարարագիր է ներկայացնում Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին:

3. Այն դեպքում, երբ դատական փաստաթղթերն առաքվում են արտասահմանում գտնվող այնպիսի անձանց, որոնց նկատմամբ կիրառվում են նախնական միջոցներ, կամ կատարվում է ուղարկող Կողմից տրված բռնագրավման լիազորագրերի պահանջը, այդ Կողմը պետք է նշի, թե իր օրենսդրությամբ իրավական պաշտպանության ինչ միջոցներ են սահմանված այդպիսի անձանց համար:

Հոդված 32. Այլ Կողմերի որոշումների հաստատումը

1. 3-րդ և 4-րդ բաժիններով նախատեսված՝ համագործակցություն իրականացնելու վերաբերյալ հարցումը կատարելիս հարցում ստացող Կողմը պետք է ճանաչի հարցում ներկայացնող Կողմի՝ երրորդ Կողմերի հայցած իրավունքների վերաբերյալ ընդունած յուրաքանչյուր դատական որոշում:

2. Ճանաչումը կարող է մերժվել, եթե.

ա) երրորդ Կողմերը համարժեք հնարավորություն չեն ունեցել իրենց իրավունքները պաշտպանելու համար, կամ

բ) որոշումն անհամատեղելի է հարցում ստացող Կողմի երկրում միևնույն հարցի վերաբերյալ արդեն իսկ ընդունված որոշման հետ, կամ

գ) այն անհամատեղելի է հարցում ստացող Կողմի հասարակական կարգի հետ, կամ

դ) որոշումն ընդունվել է հարցում ստացող Կողմի օրենսդրությամբ նախատեսված՝ բացառիկ իրավասության վերաբերյալ դրույթներին հակառակ:

ԲԱԺԻՆ 7. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Հոդված 33. Կենտրոնական մարմին

1. Կողմերը պետք է նշանակեն կենտրոնական մարմին կամ, անհրաժեշտության դեպքում, մի քանի մարմիններ, որոնք պատասխանատու կլինեն սույն բաժնի համաձայն կատարված հարցումներն ուղարկելու և դրանց պատասխանելու, այդպիսի հարցումները կատարելու կամ դրանք՝ կատարման համար իրավազոր մարմիններին փոխանցելու համար:
2. Կողմերից յուրաքանչյուրը ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին իր իրավական փաստաթուղթը ի պահ հանձնելիս պետք է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին փոխանցի սույն հոդվածի 1-ին կետի համաձայն նշանակված մարմինների անվանումները և հասցեները:

Հոդված 34. Անմիջական հաղորդակցում

1. Կենտրոնական մարմինները պետք է ուղղակիորեն հաղորդակցվեն միմյանց հետ:
2. Անհետաձգելի դեպքերում սույն բաժնով նախատեսված հարցումները կամ հաղորդակցությունները կարող են հարցում ներկայացնող Կողմի դատական մարմինների, այդ թվում՝ հանրային դատախազության կողմից ուղղակիորեն առաքվել հարցում ստացող Կողմի համանման մարմիններին: Այդպիսի դեպքերում պատճենը միաժամանակ պետք է ուղարկվի հարցում ստացող Կողմի կենտրոնական մարմնին հարցում ներկայացնող Կողմի կենտրոնական մարմնի միջոցով:
3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված ցանկացած հարցում կամ հաղորդակցություն կարող է կատարվել քրեական ոստիկանության միջազգային կազմակերպության (Ինտերպոլի) միջոցով:
4. Այն դեպքում, երբ հարցում է կատարվում սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն, և տվյալ մարմինը իրավասու չէ կատարելու այդ հարցման պահանջը, նա պետք է հարցումը ուղղի իրավասու ազգային մարմնին և այդ մասին ուղղակիորեն տեղեկացնի հարցում ներկայացնող Կողմին:

5. Սույն բաժնի 2-րդ ենթաբաժնով սահմանված հարցումները կամ հաղորդակցությունները, որոնք չեն ներառում հարկադիր գործողություն, կարող են հարցում ներկայացնող Կողմի իրավասու մարմինների կողմից ուղղակիորեն փոխանցվել հարցում ստացող Կողմի իրավասու մարմիններին:
6. Նախքան պաշտոնական հարցում ներկայացնելը սույն բաժնով նախատեսված հարցումների կամ հաղորդակցությունների նախագծերը կարող են հարցում ներկայացնող Կողմի դատական մարմինների կողմից ուղղակիորեն առաքվել հարցում ստացող Կողմի համանման մարմիններին, որպեսզի հարցումը արդյունավետ կերպով օգտագործվի ստացվելուց անմիջապես հետո և պարունակի բավականաչափ տեղեկատվություն և հիմնավորող փաստաթղթեր՝ հարցում ստացող Կողմի օրենսդրության պահանջներին համապատասխանելու համար:

Հոդված 35. Հարցման ձևը և լեզուները

1. Սույն բաժնով նախատեսված բոլոր հարցումները պետք է կատարվեն գրավոր: Դրանք կարող են փոխանցվել էլեկտրոնային ճանապարհով կամ հեռահաղորդակցման որևէ այլ մջջոցով՝ այն պայմանով, որ հարցում ներկայացնող Կողմը հարցման դեպքում պատրաստ լինի ցանկացած ժամանակ ներկայացնելու այդպիսի հաղորդակցության գրավոր փաստաթուղթը և բնօրինակը: Սակայն Կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարագրով նշել այն պայմանները, որոնց առկայության դեպքում ինքը պատրաստ է ընդունելու և կատարելու էլեկտրոնային ճանապարհով կամ հաղորդակցման որևէ այլ միջոցով ստացված հարցումները:
2. Սույն հոդվածի 3-րդ պարբերության դրույթներից ելնելով՝ հարցումների կամ ուղեկցող փաստաթղթերի թարգմանությունը պարտադիր չէ:

Պետություններից յուրաքանչյուրը կամ Եվրոպական համայնքը կարող է ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին իր իրավական փաստաթուղթը ի պահ հանձնելիս Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին փոխանցել հայտարարագիր, որտեղ նշված կլինի, որ ինքն իրավունք է վերապահում պահանջելու, որ իրեն ուղղված հարցումները և այդպիսի հարցումները հիմնավորող փաստաթղթերն ուղեկցվեն իր լեզվով, Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներից մեկով կամ իր կողմից նշված այդ լեզուներից որևէ մեկով կատարված թարգմանությամբ: Այդ կապակցությամբ նա կարող է հայտնել իր պատրաստակամությունը մեկ այլ լեզվով (իր կողմից նշված) թարգմանություններ ընդունելու վերաբերյալ: Մյուս Կողմերը կարող են օգտվել փոխադարձության սկզբունքից:

Հոդված 36. Իրավական ուժի հաստատում

Սույն բաժնով սահմանված դրույթների իրագործման նպատակով փոխանցված

փաստաթղթերը պետք է ազատվեն իրավական ուժի հաստատման համար նախատեսված բոլոր պայմանականություններից:

Հոդված 37. Հարցման պարունակությունը

1. Սույն բաժնով նախատեսված համագործակցության վերաբերյալ ցանկացած հարցում պետք է պարունակի.

ա) հարցում ներկայացնող մարմնի, ինչպես նաև հետաքննություն կամ դատական վարույթ իրականացնող մարմնի անվանումը.

բ) հարցման առարկան և հիմքերը.

գ) հետաքննությանը կամ դատավարությանը առնչվող հիմքերը, ներառյալ համապատասխան փաստերը (օրինակ՝ հանցանքի կատարման ամսաթիվը, վայրը և հանգամանքները), բացառությամբ ծանուցման հարցումների դեպքի.

դ) այն չափով, որքանով հանցագործությունը ներառում է հարկադիր գործողություն՝

i. կանոնադրական դրույթների տեքստը կամ, հնարավոր չլինելու դեպքում, կիրառվող համապատասխան օրենքի ձևակերպումը, և

ii. նշում այն մասին, որ հայցվող միջոցը կամ համանման ազդեցություն ունեցող ցանկացած այլ միջոց կիրառելի կլինի հարցում ներկայացնող Կողմի տարածքում՝ վերջինիս օրենսդրության համաձայն.

ե) անհրաժեշտության դեպքում և հնարավորության սահմաններում՝

i. համապատասխան անձի կամ անձանց վերաբերյալ տեղեկությունները, ներառյալ անունը, ծննդյան ամսաթիվը և վայրը, ազգությունը, բնակության վայրը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ գտնվելու վայրը, և

ii. այն գույքը, որի առնչությամբ հայցվում է համագործակցությունը, դրա գտնվելու վայրը և կապը համապատասխան անձի կամ անձանց հետ, ցանկացած տեսակի կապը հանցանքի հետ, ինչպես նաև այլ անձանց, գույքի նկատմամբ շահ ունենալու վերաբերյալ առկա ցանկացած տեղեկատվություն, և

զ) ցանկացած առանձնակի ընթացակարգ, որը հարցում ներկայացնող Կողմը ցանկանում է պահպանել:

2. 3-րդ բաժնի համաձայն նախնական միջոցներ կիրառելու վերաբերյալ հարցման մեջ, որն առնչվում է այնպիսի գույքի առգրավմանը, որի նկատմամբ կարող է կիրառվել գումար վճարելու պահանջից բաղկացած բռնագրավման օրդերը, պետք է նշվի նաև այդ գույքից ստացվելիք հատուցման առավելագույն գումարը:

3. 1-ին կետում նշված նշումներից բացի՝ 4-րդ բաժնով նախատեսված յուրաքանչյուր հարցում պետք է պարունակի.

ա) 23-րդ հոդվածի 1.ա կետի դեպքում՝

i. հարցում ներկայացնող Կողմի դատարանի կողմից տրված՝ բռնագրավման օրդերի՝ հաստատված ու վավերացված պատճենը և այն հիմքերի վերաբերյալ հայտարարությունը, որոնց հիման վրա տրվել է բռնագրավման օրդերը, եթե այդ հիմքերը նշված չեն բռնագրավման օրդերում.

ii. հարցում ներկայացնող Կողմի իրավասու մարմնի վավերացումն այն մասին, որ բռնագրավման օրդերը իրագործելի է և ենթակա չէ բողոքարկման սովորական միջոցների.

iii. տեղեկություններ այն մասին, թե ինչ չափով է հայցվում օրդերի կատարումը, և

iv. տեղեկություններ որևէ նախնական միջոց ձեռնարկելու անհրաժեշտության մասին,

բ) 23-րդ հոդվածի 1.բ կետի դեպքում՝ այն փաստերի վերաբերյալ հայտարարությունը, որոնց վրա հիմնվել է հարցում ներկայացնող Կողմը, և որոնք բավարար են, որ հարցում ստացող Կողմը հնարավորություն ունենա պահանջելու օրդերի կատարումը իր ներքին օրենսդրության շրջանակներում.

գ) այն դեպքում երբ երրորդ Կողմերը հնարավորություն են ունեցել պաշտպանելու իրենց իրավունքները՝ այդ մասին վկայող փաստաթղթեր:

Հոդված 38. Թերի հարցումներ

1. Այն դեպքում, երբ հարցումը չի համապատասխանում սույն բաժնի դրույթներին, կամ եթե տրամադրված տեղեկատվությունը բավարար չէ, որ հարցում ստացող Կողմը հնարավորություն ունենա կատարելու հարցման պահանջը, այդ Կողմը կարող է հարցում ներկայացնող Կողմին խնդրել փոփոխություններ կատարել հարցման մեջ կամ այն համալրել լրացուցիչ տեղեկատվությամբ:

2. Հարցում ստացող Կողմը կարող է որոշակի ժամկետ սահմանել այդպիսի փոփոխություններ կամ տեղեկատվություն ստանալու համար:

3. Նախքան սույն բաժնի 4-րդ ենթաբաժնով սահմանված հարցման առնչությամբ հայցված փոփոխությունները կամ տեղեկատվությունն ստանալը հարցում ստացող Կողմը կարող է ձեռնարկել սույն բաժնի 2-րդ կամ 3-րդ ենթաբաժիններով նշված ցանկացած միջոց:

Հոդված 39. Բազմակի հարցումներ

1. Այն դեպքում, երբ հարցում ստացող Կողմը միևնույն անձի կամ գույքի վերաբերյալ

ստանում է սույն բաժնի 3-րդ կամ 4-րդ ենթաբաժիններով սահմանված մեկից ավելի հարցում, այդ հարցումների բազմաքանակ լինելը այդ Կողմին չպետք է խոչընդոտի կատարել նախնական միջոցների ձեռնարկում ներառող հարցումները:

2. Սույն բաժնի 4-րդ ենթաբաժնով սահմանված հարցումների բազմաքանակ լինելու դեպքում հարցում ստացող Կողմը պետք է քննարկի հարցում ներկայացնող Կողմերի հետ խորհրդակցելու հարցը:

Հոդված 40. Հիմքեր ներկայացնելու պարտավորությունը

Հարցում ստացող Կողմը պետք է հիմքեր ներկայացնի սույն բաժնով նախատեսված համագործակցությունը մերժելու, հետաձգելու կամ նախապայման սահմանելու իր յուրաքանչյուր որոշման համար:

Հոդված 41. Տեղեկատվություն

1. Հարցում ստացող Կողմը պետք է արագորեն տեղեկացնի հարցում ներկայացնող Կողմին.

ա) սույն բաժնով սահմանված հարցման առիթով ձեռնարկված գործողության մասին.

բ) այդ հարցման հիման վրա իրականացված գործողության վերջնական արդյունքի մասին.

գ) սույն բաժնով նախատեսված համագործակցությունը մասնակիորեն կամ ամբողջությամբ մերժելու, հետաձգելու կամ նախապայման սահմանելու ցանկացած որոշման մասին.

դ) ցանկացած այնպիսի հանգամանքի մասին, որը անհնարին է դարձնում հայցվող գործողության կատարումը կամ, հավանաբար, զգալիորեն հետաձգում է այն, և

ե) սույն բաժնի 2-րդ կամ 3-րդ ենթաբաժիններով սահմանված հարցման համաձայն ձեռնարկված նախնական միջոցների դեպքում՝ իր ներքին օրենսդրության այնպիսի դրույթների մասին, որոնք ինքնաբերաբար կհանգեցնեն նախնական միջոցի դադարեցմանը:

2. Հարցում ներկայացնող Կողմը պետք է արագորեն տեղեկացնի հարցում ստացող Կողմին.

ա) ցանկացած վերանայման, որոշման կամ որևէ այլ փաստի մասին, որի հետևանքով բռնագրավման օրդերը դադարում է մասնակիորեն կամ ամբողջովին իրագործելի լինելուց, և

բ) ցանկացած փաստացի կամ իրավական զարգացման մասին, որի հետևանքով սույն բաժնով նախատեսված ցանկացած գործողություն այլևս արդարացված չէ:

3. Այն դեպքում, երբ Կողմը միևնույն բռնագրավման օրդերի հիման վրա բռնագրավում է հայցում մեկից ավելի Կողմերից, նա պետք է այդպիսի որոշման մասին տեղեկացնի բոլոր այն Կողմերին, որոնց առնչվում է բռնագրավման լիազորագրի իրագործումը:

Հոդված 42. Տեղեկատվության օգտագործման սահմանափակումը

1. Հարցում ստացող Կողմը կարող է հարցման կատարման համար սահմանել այնպիսի պայման, ըստ որի ստացված տեղեկատվությունը կամ փաստը, առանց իր նախնական համաձայնության, հարցում ներկայացնող Կողմի իրավասու մարմինների կողմից չի կարող օգտագործվել կամ փոխանցվել հարցման մեջ նշված հետաքննություննից կամ դատավարությունից բացի՝ այլ հետաքննության կամ դատավարության նպատակներով:
2. Պետություններից յուրաքանչյուրը կամ Եվրոպական համայնքը կարող է ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին իր իրավական փաստաթուղթը ի պահ հանձնելիս Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարագրի միջոցով հայտարարել, որ սույն բաժնի համաձայն իր կողմից տրամադրված տեղեկատվությունը կամ փաստը, առանց իր նախնական համաձայնության, հարցում ներկայացնող Կողմի իրավասու մարմինների կողմից չի կարող օգտագործվել կամ փոխանցվել հարցման մեջ նշված հետաքննությունից կամ դատավարությունից բացի՝ այլ հետաքննության կամ դատավարության նպատակներով:

Հոդված 43. Գաղտնիությունը

1. Հարցում ներկայացնող Կողմը կարող է պահանջել, որ հարցում ստացող Կողմը ապահովի հարցման փաստերի և առարկայի գաղտնիությունը այն չափով, որքանով դա անհրաժեշտ է հարցումը կատարելու համար: Եթե հարցում ստացող Կողմը չի կարող բավարարել գաղտնիության պահանջը, նա պետք է այդ մասին պատշաճ կերպով տեղեկացնի հարցում ներկայացնող Կողմին:
2. Հարցում ներկայացնող Կողմը պետք է, եթե դա չի հակասում իր ազգային օրենսդրության հիմնարար սկզբունքներին, և եթե առկա է այդպիսի պահանջ, ապահովի հարցում ստացող Կողմի տրամադրած ցանկացած փաստի կամ տեղեկատվության գաղտնիությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի փաստի կամ տեղեկատվության հրապարակումը անհրաժեշտ է հարցման մեջ նշված հետաքննության կամ դատավարության նպատակներով:
3. Իր ներքին օրենսդրության դրույթներին համապատասխան՝ այն Կողմը, որը

ստացել է 20-րդ հոդվածով նախատեսված ինքնակամորեն փոխանցվող տեղեկատվությունը, պետք է բավարարի տեղեկատվությունը տրամադրող Կողմի ներկայացրած գաղտնիության պահանջը: Եթե մյուս Կողմը չի կարող կատարել այդ պահանջը, նա պետք է պատշաճ կերպով տեղեկացնի փոխանցող Կողմին:

Հոդված 44. Ծախսերը

Հարցման պահանջի կատարման հետ կապված սովորական ծախսերը պետք է հատուցի հարցում ստացող Կողմը: Այն դեպքում, երբ հարցման կատարման համար անհրաժեշտ են էական կամ չնախատեսված ծախսեր, Կողմերը պետք է խորհրդակցեն և որոշեն, թե ինչ պայմանների հիման վրա է կատարվելու հարցման պահանջը, և ինչպես են հատուցվելու ծախսերը:

Հոդված 45. Վնասները

1. Այն դեպքում, երբ որևէ անձ իրավական գործողություն է նախաձեռնում՝ սույն բաժնով նախատեսված համագործակցության հետ կապված որևէ գործողության կամ անգործության արդյունքում պատճառած վնասի համար պատասխանատվության ենթարկելու նպատակով, շահագրգիռ Կողմերը պետք է օգտագործեն միմյանց հետ խորհրդակցելու հնարավորությունը, որպեսզի որոշեն, թե ինչպես պետք է բաշխվի վնասի հատուցման ենթակա գումարը:
2. Այն Կողմը, որը դարձել է վնասների հատուցման դատական վեճի սուբյեկտ, պետք է փորձի մյուս Կողմին տեղեկացնել այդպիսի վեճի մասին, եթե այդ Կողմը կարող է շահագրգռվածություն ունենալ այդ դատական հարցում:

ԲԱԺԻՆ V. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՖՀՄ-ՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Հոդված 46. Համագործակցությունը ՖՀՄ-ների միջև

1. Կողմերը պետք է ապահովեն, որ սույն Կոնվենցիայով սահմանված ՖՀՄ-ները համագործակցեն փողերի լվացման դեմ պայքարի նպատակով՝ այնպիսի փաստի վերաբերյալ տեղեկատվություն հավաքելու, վերլուծելու և, համապատասխան դեպքերում, ՖՀՄ-ի ներսում հետաքննություն իրականացնելու միջոցով, որը կարող է փողերի լվացման չափանիշ հանդիսանալ՝ իրենց ազգային օրենսդրությանը համապատասխան:
2. 1-ին կետի նպատակների համար Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապահովի, որ ՖՀՄ-ները փոխանակեն, ինքնակամորեն կամ հարցման հիման վրա, սույն Կոնվենցիային կամ սույն Կոնվենցիայի հետ համատեղելի՝ գոյություն ունեցող կամ հետագա փոխըմբռնման հուշագրերին համապատասխան, ցանկացած մատչելի տեղեկատվություն, որը կարող է էական լինել փողերի լվացման հետ կապ ունեցող ֆինանսական գործարքների և ներգրավված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վերաբերյալ տեղեկատվության մշակման և վերլուծության համար կամ, համապատասխան դեպքերում, ՖՀՄ-ի կողմից հետաքննության համար:

3. Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապահովի, որ սույն հոդվածով սահմանված ՖՀՄ-ների գործառույթների կատարմանը չխոչընդոտի նրանց ներքին կարգավիճակը՝ անկախ նրանից՝ դրանք վարչական, իրավապահ, թե դատական մարմիններ են հանդիսանում:
4. Սույն հոդվածին համապատասխան կատարված յուրաքանչյուր հարցում պետք է զուգակցվի հարցում ներկայացնող ՖՀՄ-ին հայտնի էական փաստերի հակիրճ ներկայացմամբ: ՖՀՄ-ն հարցման մեջ պետք է նշի, թե ինչպես է օգտագործվելու հայցվող տեղեկատվությունը:
5. Այն դեպքում, երբ սույն հոդվածին համապատասխան հարցում է կատարվում, հարցում ստացող ՖՀՄ-ն պետք է տրամադրի հարցման մեջ նշված՝ համապատասխան ամբողջ տեղեկատվությունը, ներառյալ մատչելի ֆինանսական տեղեկատվությունը և օրենքի կիրառության վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը, առանց հարցման պաշտոնական նամակ ներկայացնելու անհրաժեշտության՝ Կողմերի միջև կիրառելի կոնվենցիաների կամ համաձայնագրերի ներքո:
6. ՖՀՄ-ն կարող է հրաժարվել տեղեկատվություն հրապարակելուց, եթե այն կարող է վնասել հարցում ստացող Կողմում իրականացվող քրեական հետաքննությանը, կամ, բացառիկ դեպքերում, եթե տեղեկատվության հրապարակումը ակնհայտորեն անհամադրելի է ֆիզիկական կամ իրավաբանական անձի կամ շահագրգիռ Կողմի օրինական շահերի հետ կամ որևէ այլ կերպ չի համապատասխանում հարցում ստացող Կողմի ազգային օրենսդրության հիմնարար սկզբունքներին: Ցանկացած այդպիսի մերժում պետք է համապատասխան կերպով պարզաբանվի տեղեկատվությունը հայցող ՖՀՄ-ին:
7. Սույն հոդվածի ներքո ստացված տեղեկատվությունը կամ փաստաթղթերը պետք է օգտագործվեն բացառապես 1-ին կետում նշված նպատակների համար: Գործընկեր ՖՀՄ-ի կողմից տրամադրված տեղեկատվությունը չպետք է տրամադրվի երրորդ Կողմի և չպետք է օգտագործվի, այն ստացող ՖՀՄ-ի կողմից վերլուծությունից բացի, որևէ այլ նպատակի համար՝ առանց տեղեկատվությունը տրամադրող ՖՀՄ-ի նախնական համաձայնության:
8. Սույն հոդվածին համապատասխան տեղեկատվություն կամ փաստաթղթեր փոխանցելիս փոխանցում իրականացնող ՖՀՄ-ն կարող է սահմանափակումներ և պայմաններ սահմանել՝ տեղեկատվությունը, 7-րդ կետով նախատեսված նպատակներից բացի, այլ նպատակներով օգտագործելու համար: Տեղեկատվություն ստացող ՖՀՄ-ն պետք է կատարի ցանկացած այդպիսի սահմանափակում կամ պայման:
9. Այն դեպքում, երբ Կողմերից որևէ մեկը ցանկանում է փոխանցված տեղեկատվությունը կամ փաստաթղթերը, 7-րդ կետով նախատեսված նպատակներին համապատասխան, օգտագործել քրեական հետաքննության կամ դատավարության համար, փոխանցումն իրականացնող ՖՀՄ-ն չպետք է հրաժարվի այդպիսի համաձայնություն տալուց՝ բացառությամբ այն դեպքերի, եթե այդ մերժումը կատարվում է իր ներքին օրենսդրությամբ նախատեսված

սահմանափակումների կամ 6-րդ կետով նշված պայմանների հիման վրա: Համաձայնությունը տալու յուրաքանչյուր մերժում պետք է համապատասխան ձևով պարզաբանվի:

10. ՖՀՄ-ն պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները, ներառյալ անվտանգության միջոցները, որպեսզի ապահովի, որ սույն հոդվածի ներքո փոխանցված տեղեկատվությունը մատչելի չլինի որևիցե այլ մարմնի, գործակալության կամ բաժնի:
11. Փոխանցվող տեղեկատվությունը պետք է պաշտպանված լինի, Եվրոպայի խորհրդի 1981թ. հունվարի 28-ի՝ Անհատական տվյալների ավտոմատացված մշակման առնչությամբ անձանց պաշտպանության մասին (ETS հմ. 108) կոնվենցիային համապատասխան և Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 1987թ. սեպտեմբերի 15-ի՝ Ոստիկանության համակարգում անհատական տվյալների օգտագործումը կարգավորող հմ. R (87) 15 առաջարկի նկատառմամբ, գաղտնիության և անհատական տվյալների պաշտպանության առնվազն նույն կանոններով, որոնք, ազգային օրենսդրության ներքո, կիրառելի են հարցում ներկայացնող ՖՀՄ-ի նկատմամբ:
12. Փոխանցում իրականացնող ՖՀՄ-ն կարող է հիմնավորված հարցումներ կատարել տրամադրված տեղեկատվության օգտագործման վերաբերյալ, իսկ տեղեկատվություն ստացող ՖՀՄ-ն պետք է գործնականորեն հնարավոր լինելու դեպքում տրամադրի այդ հետադարձ տեղեկատվությունը:
13. Կողմերը պետք է նշեն այն մարմինը, որը սույն հոդվածի իմաստով ՖՀՄ-ն է:

Հոդված 47. Միջազգային համագործակցությունը կասկածելի գործարքները հետաձգելու առումով

1. Կողմերից յուրաքանչյուրը պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք ՖՀՄ-ին հնարավորություն կտան օտարերկրյա ՖՀՄ-ից հարցում ստանալու դեպքում ձեռնարկել անհապաղ գործողություն, որպեսզի տեղի ունեցող գործարքը դադարեցվի կամ կասեցվի այնպիսի ժամանակահատվածով և այնպիսի պայմաններից ելնելով, որոնք, իր ներքին օրենսդրության համաձայն, կիրառելի են գործարքների հետաձգման նկատմամբ:
2. 1-ին կետում նշված գործողությունը պետք է ձեռնարկվի այն դեպքում, երբ հարցում ստացող ՖՀՄ-ն հարցում ներկայացնող ՖՀՄ-ից հաստատում ստանալուց հետո ընդունում է, որ.
 - ա) գործարքը կապված է փողերի լվացման հետ, և
 - բ) գործարքը ժամանակավորապես կդադարեցվեր կամ կկասեցվեր, եթե երկրի ներսում գործարքը կասկածելի որակվեր:

ԲԱԺԻՆ VI. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՄԵԽԱՆԻԶՄԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 48. Մոնիտորինգի մեխանիզմը և վեճերի կարգավորումը

1. Կողմերի համաժողովը (ԿՀ) պետք է պատասխանատու լինի Կոնվենցիայի կատարմանը հետևելու համար: ԿՀ-ն՝

ա) պետք է մոնիտորինգի ենթարկի Կողմերի՝ տվյալ Կոնվենցիայի պատշաճ իրագործումը:

բ) պետք է որևէ Կողմից հարցում ստանալու դեպքում կարծիք հայտնի տվյալ Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված ցանկացած հարցի վերաբերյալ:

2. ԿՀ-ն՝ պետք է իրականացնի վերը նշված 1.ա կետով սահմանված գործառույթները՝ օգտագործելով փողերի լվացման դեմ պայքարի միջոցառումները գնահատող փորձագետների հատուկ հանձնաժողովի (ՄԱՆԵՎԱԼ) ցանկացած մատչելի հրապարակային ամփոփագիրը ՄԱՆԵՎԱԼ -ի անդամ երկրների համար) և Ֆինանսական գործողությունների աշխատանքային խմբի (ՖԳԱԽ)-ի ցանկացած մատչելի հրապարակային ամփոփագիրը ՖԳԱԽ-ի անդամ երկրների համար)՝ համապատասխան դեպքերում դրանք լրացնելով պարբերական ինքնագնահատման հարցաշարերով: Մոնիտորինգի ընթացակարգը կառնչվի սույն Կոնվենցիայով նախատեսված ոլորտներին միայն այն չափով, որքանով դրանք ներառված չեն այլ համապատասխան միջազգային չափանիշներում, որոնց վերաբերյալ ՖԳԱԽ-ի և ՄԱՆԵՎԱԼ -ի կողմից կատարվում են փոխադարձ գնահատումներ:

3. Այն դեպքում, երբ ԿՀ-ն՝ եզրակացնում է, որ իր գործառույթների կատարման համար անհրաժեշտ է հետագա տեղեկատվություն, նա պետք է հաղորդակցվի շահագրգիռ Կողմի հետ՝ օգտվելով, եթե դա պահանջվում է ԿՀ-ի կողմից, MONEYVAL-ի ընթացակարգից և մեխանիզմից: Շահագրգիռ Կողմը պետք է այնուհետև հետադարձ տեղեկատվություն ներկայացնի ԿՀ-ին: Դրա հիման վրա ԿՀ-ն՝ պետք է որոշում կայացնի շահագրգիռ Կողմի իրավիճակի առավել մանրամասն գնահատում իրականացնելու կամ չիրականացնելու վերաբերյալ: Սա կարող է ներառել, սակայն ոչ պարտադիր կերպով, գնահատող խմբի այցելությունը երկիր:

4. Սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ Կողմերի միջև տարաձայնություն առաջանալու դեպքում նրանք պետք է փորձեն տարաձայնությունը կարգավորել բանակցության կամ, իրենց ընտրությամբ, որևիցե այլ խաղաղ մջջոցով՝ ներառյալ վեճը ներկայացնելը ԿՀ-ին, արբիտրաժ ատյանի, որի որոշումները պետք է պարտադիր լինեն Կողմերի համար, կամ, շահագրգիռ Կողմերի համաձայնությամբ, արդարադատության միջազգային դատարանին:

5. COP-ը պետք է ընդունի ընթացակարգային իր սեփական կանոնները:

6. Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը պետք է ԿՀ-ի ժողովը զումարի ոչ ուշ, քան սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում: Դրանից հետո COP-ի հերթական հանդիպումները պետք է տեղի ունենան ԿՀ-ի կողմից

ընդունված ընթացակարգային կանոններին համապատասխան:

ԲԱԺԻՆ VII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 49. Ստորագրումը և ուժի մեջ մտնելը

1. Կոնվենցիան պետք է բաց լինի Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների, Եվրոպական համայնքի և դրա մշակմանը մասնակցած ոչ անդամ պետությունների ստորագրման համար: Այդ պետությունները կամ Եվրոպական համայնքը կարող են պարտավորություն ստանձնելու իրենց համաձայնությունը արտահայտել հետևյալի միջոցով.

ա) ստորագրմամբ՝ առանց վավերացման, ընդունման կամ հաստատման վերաբերյալ վերապահում անելու, կամ

բ) ստորագրմամբ, որը ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման, որին հետևում է վավերացումը, ընդունումը կամ հաստատումը:

2. Վավերագրերը, ընդունման կամ հաստատման փաստաթղթերը պետք է ի պահ հանձնվեն Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին:

3. Սույն Կոնվենցիան պետք է ուժի մեջ մտնի եռամսյա ժամանակահատվածը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը՝ սկսած այն ամսաթվից, երբ Կոնվենցիան ստորագրած վեց Կողմերը, որոնցից առնվազն չորսը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններ են, իրենց համաձայնությունն են արտահայտել Կոնվենցիայի կատարման համար պարտավորություն ստանձնելու վերաբերյալ՝ 1-ին պարբերության դրույթներին համապատասխան:

4. Կոնվենցիան ստորագրած ցանկացած Կողմի համար, որը հետագայում իր համաձայնությունը կարտահայտի կատարման համար պարտավորություն ստանձնելու վերաբերյալ, Կոնվենցիան ուժի մեջ պետք է մտնի եռամսյա ժամանակահատվածը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը՝ սկսած, 1-ին կետի դրույթներին համապատասխան, Կոնվենցիայի կատարման համար պարտավորություն ստանձնելու վերաբերյալ համաձայնություն արտահայտելու ամսաթվից:

5. 1990 թ. Կոնվենցիայի Կողմերից և ոչ մեկը չի կարող վավերացնել, ընդունել կամ հաստատել սույն Կոնվենցիան, եթե չի համարում, որ պարտավորություն է կրում առնվազն այն դրույթների կատարման համար, որոնք համապատասխանում են 1990 թ. Կոնվենցիայի դրույթներին, որոնց կատարման համար ինքը պարտավորություն է կրում:

6. Սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու պահից այն Կողմերը, որոնք հանդիսանում են նաև 1990 թ. Կոնվենցիայի Կողմեր.

ա) պետք է կիրառեն սույն Կոնվենցիայի դրույթները իրենց փոխադարձ

հարաբերություններում.

բ) պետք է շարունակեն կիրառել 1990 թ. Կոնվենցիայի դրույթները այդ Կոնվենցիայի մյուս Կողմերի, բայց ոչ տվյալ Կոնվենցիայի Կողմերի հետ իրենց հարաբերություններում:

Հոդված 50. Կոնվենցիային միանալը

1. Սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն Կոնվենցիայի Կողմերի հետ խորհրդակցելուց հետո կարող է հրավիրել խորհրդի անդամ չհանդիսացող և Կոնվենցիայի մշակմանը չմասնակցած ցանկացած պետության՝ միանալու սույն Կոնվենցիային՝ Եվրոպայի խորհրդի Կանոնադրության 20-րդ հոդվածի դ կետով նախատեսված ծայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ և կոմիտեում ընդգրկված լինելու իրավունք ունեցող Կողմերի ներկայացուցիչների միաձայն քվեարկությամբ:
2. Կոնվենցիային միացող ցանկացած պետության համար սույն Կոնվենցիան ուժի մեջ պետք է մտնի եռամսյա ժամանակահատվածը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը՝ սկսած միանալու մասին փաստաթուղթը Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու ամսաթվից:

Հոդված 51. Տարածքային կիրառումը

1. Ցանկացած պետություն կամ Եվրոպական համայնքը կարող է ստորագրման պահին կամ վավերագիրը, ընդունման, հաստատման կամ միանալու մասին իր փաստաթուղթը ի պահ հանձնելիս նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ պետք է կիրառվի սույն Կոնվենցիան:

Ցանկացած Կողմ կարող է ավելի ուշ ամսաթվի՝ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարությամբ տվյալ Կոնվենցիայի կիրառումը տարածել հայտարարագրում նշված որևիցե այլ տարածքի վրա: Այդպիսի տարածքի համար Կոնվենցիան ուժի մեջ պետք է մտնի եռամսյա ժամանակահատվածը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը սկսած այդ հայտարարագիրը գլխավոր քարտուղարի ստանալու ամսաթվից:

Նախորդ երկու կետերին համապատասխան արված ցանկացած հայտարարություն հայտարարությունում նշված ցանկացած տարածքի նկատմամբ կարող է չեղյալ համարվել գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցագրի միջոցով: Չեղյալ հայտարարելը պետք է ուժի մեջ մտնի եռամսյա ժամանակահատվածը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը սկսած այդ ծանուցագիրը գլխավոր քարտուղարի ստանալու ամսաթվից:

Հոդված 52. Կապը այլ կոնվենցիաների և համաձայնագրերի հետ

1. Սույն Կոնվենցիան չի անդրադառնում առանձնահատուկ հարցերի վերաբերյալ միջազգային բազմակողմ փաստաթղթերից բխող՝ Կողմերի իրավունքների ու պարտավորությունների վրա:
2. Սույն Կոնվենցիայի Կողմերը կարող են միմյանց հետ կնքել երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր սույն Կոնվենցիայում արտացոլված հարցերի շուրջ՝ դրա դրույթները համալրելու կամ ամրապնդելու, ինչպես նաև դրանում ներառված սկզբունքների կիրառումը հեշտացնելու համար:
3. Այն դեպքում, երբ երկու կամ ավելի Կողմեր արդեն կնքել են համաձայնագիր կամ պայմանագիր սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող հարցերի շուրջ կամ որևիցե այլ կերպով հաստատել են իրենց հարաբերությունները այդ հարցերի վերաբերյալ, նրանք պետք է իրավունք ունենան կիրառելու այդ համաձայնագիրը կամ պայմանագիրը կամ համապատասխան կերպով կարգավորելու այդ հարաբերությունները՝ Կոնվենցիան կիրառելու փոխարեն, եթե դա հեշտացնում է միջազգային համագործակցությունը:
4. Եվրոպայի միության անդամ հանդիսացող Կողմերը իրենց փոխադարձ հարաբերություններում պետք է կիրառեն Համայնքի և Եվրոպայի միության կանոնները այնքանով, որքանով առկա են որոշակի առանձնահատուկ հարց կարգավորող և տվյալ առանձին դեպքի համար կիրառելի՝ Համայնքի կամ Եվրոպայի միության կանոններ, չխախտելով տվյալ Կոնվենցիայի առարկան ու նպատակը, ինչպես նաև դրա ամբողջական կիրառումը այլ Կողմերի հետ հարաբերություններում:

Հոդված 53. Հայտարարություններ և վերապահումներ

1. Պետություններից յուրաքանչյուրը կամ Եվրոպական համայնքը կարող է ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին իր իրավական փաստաթուղթը ի պահ հանձնելիս կատարել 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 9-րդ հոդվածի 4-րդ կետով, 17-րդ հոդվածի 5-րդ կետով, 24-րդ հոդվածի 3-րդ կետով, 31-րդ հոդվածի 2-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով և 42-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հայտարարություններից մեկը կամ մի քանիսը:
2. Պետություններից յուրաքանչյուրը կամ Եվրոպական համայնքը կարող է նաև ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին իր իրավական փաստաթուղթն ի պահ հանձնելիս Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարագրի միջոցով իրեն իրավունք վերապահել չկիրառել, մասնակիորեն կամ ամբողջությամբ, 7-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետի, 9-րդ հոդվածի 6-րդ կետի, 46-րդ հոդվածի 5-րդ կետի և 47-րդ հոդվածի դրույթները:
3. Պետություններից յուրաքանչյուրը կամ Եվրոպական համայնքը կարող է ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ

միանալու մասին իր իրավական փաստաթուղթը ի պահ հանձնելիս հայտարարել, թե ինչ ձևով է ինքը նախատեսում կիրառել սույն Կոնվենցիայի 17-րդ և 19-րդ հոդվածները, մասնավորապես հաշվի առնելով քրեական հարցերով միջազգային համագործակցության ոլորտում կիրառելի միջազգային համաձայնագրերը: Նա պետք է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին տեղեկացնի այդ տեղեկատվության ցանկացած փոփոխման մասին:

Պետություններից յուրաքանչյուրը կամ Եվրոպական համայնքը կարող է ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին իր փաստաթուղթը ի պահ հանձնելիս հայտարարել.

ա) որ ինքը չի կիրառի սույն Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 4-րդ կետը, կամ

բ) որ ինքը միայն մասնակիորեն կկիրառի սույն Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 4-րդ կետը, կամ

գ) թե ինչ ձևով է ինքը նախատեսում կիրառել սույն Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 4-րդ կետը:

Նա պետք է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին տեղեկացնի այդ տեղեկատվության ցանկացած փոփոխության մասին:

5. Ոչ մի այլ վերապահում չի կարող արվել:

1. Սույն հոդվածին համապատասխան վերապահում արած ցանկացած Կողմ կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն այն չեղյալ հայտարարել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցագրի միջոցով: Չեղյալ հայտարարելը պետք է ուժի մեջ մտնի այդ ծանուցագիրը գլխավոր քարտուղարի ստանալու ամսաթվից:
2. Այն Կողմը, որը սույն Կոնվենցիայի որևիցե դրույթի վերաբերյալ վերապահում է արել, չի կարող պահանջել այդ դրույթի կատարումը որևիցե այլ Կողմի կողմից, սակայն կարող է, եթե այդ վերապահումը մասնակի կամ պայմանական է, պահանջել այդ դրույթի կատարումը այնքանով, որքանով ինքն ընդունել է այն:

Հոդված 54. Փոփոխություններ

1. Կոնվենցիայում փոփոխություններ կարող են առաջարկվել ցանկացած Կողմի կողմից, և պետք է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի կողմից փոխանցվեն Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին, Եվրոպական համայնքին և բոլոր ոչ անդամ պետություններին, որոնք միացել կամ հրավիրվել են միանալու սույն Կոնվենցիային՝ 50-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:
2. Ցանկացած Կողմի առաջարկած փոփոխություն պետք է փոխանցվի Քրեական հարցերով եվրոպական հանձնախմբին (ՔՀԵՀ), որն այդ առաջարկված փոփոխության վերաբերյալ իր կարծիքը պետք է ներկայացնի նախարարների կոմիտեին:
3. Նախարարների կոմիտեն պետք է քննարկի առաջարկված փոփոխությունն ու

ՔՀԵՀ-ի կողմից ներկայացված կարծիքը և կարող է փոփոխությունն ընդունել Եվրոպայի խորհրդի կանոնադրության 20-րդ հոդվածով նախատեսված մեծամասնությամբ:

4. Նախարարների կոմիտեի կողմից սույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն ընդունված յուրաքանչյուր փոփոխության տեքստը պետք է փոխանցվի Կողմերին՝ հաստատելու համար:
5. Սույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն ընդունված ցանկացած փոփոխություն պետք է ուժի մեջ մտնի երեսուներորդ օրը՝ սկսած այն պահից, երբ բոլոր Կողմերը կտեղեկացնեն գլխավոր քարտուղարին իրենց կողմից փոփոխությունը հաստատվելու մասին:
6. Հավելվածի մեջ նշված հանցատեսակները նորացնելու, ինչպես նաև 13-րդ հոդվածը փոփոխելու նպատակով փոփոխություններ կարող են առաջարկվել ցանկացած Կողմի կամ նախարարների կոմիտեի կողմից: Դրանք Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի կողմից պետք է փոխանցվեն Կողմերին:
7. Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող Կողմերի և անհրաժեշտության դեպքում ՔՀԵՀ-ի հետ խորհրդակցելուց հետո նախարարների կոմիտեն կարող է ընդունել 6-րդ պարբերության համապատասխան առաջարկված փոփոխությունը Եվրոպայի խորհրդի կանոնադրության 20-րդ հոդվածի դ կետով նախատեսված մեծամասնությամբ: Փոփոխությունը պետք է ուժի մեջ մտնի մեկամյա ժամանակահատվածը լրանալուց հետո՝ սկսած Կողմերին այն փոխանցելու ամսաթվից: Այդ ժամանակահատվածում Կողմերից յուրաքանչյուրը կարող է ծանուցել գլխավոր քարտուղարին փոփոխությունն իր նկատմամբ ուժի մեջ մտնելու կապակցությամբ իր ունեցած առարկության մասին:
8. Եթե Կողմերի մեկ երրորդը գլխավոր քարտուղարին ծանուցում է փոփոխությունն ուժի մեջ մտնելու կապակցությամբ իր ունեցած առարկության մասին, փոփոխությունը չպետք է ուժի մեջ մտնի:
9. Եթե Կողմերի մեկ երրորդից պակաս մասը ծանուցում է առարկության մասին, փոփոխությունը պետք է ուժի մեջ մտնի այն Կողմերի համար, որոնք չեն ծանուցել առարկության մասին:
10. Այն դեպքում, երբ փոփոխությունն ուժի մեջ է մտնում սույն հոդվածի 6-9-րդ կետերին համապատասխան, և որևէ Կողմ ծանուցում է իր առարկության մասին, այդ փոփոխությունը շահագրգիռ Կողմի համար պետք է ուժի մեջ մտնի այն ամսաթվին հաջորդող ամսվա առաջին օրը, երբ նա ծանուցել է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին իր հաստատման մասին: Առարկություն արած Կողմը կարող է ցանկացած ժամանակ այն չեղյալ հայտարարել՝ այդ մասին ծանուցելով Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին:

Եթե փոփոխությունն ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից, պետությունը կամ Եվրոպական համայնքը չի կարող իր համաձայնությունը հայտնել Կոնվենցիայի կատարման համար պարտավորություն ստանձնելու վերաբերյալ՝ առանց միևնույն ժամանակ փոփոխությունն ընդունելու:

Հոդված 55. Կոնվենցիան չեղյալ հայտարարելը

1. Կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած ժամանակ չեղյալ հայտարարել

Կոնվենցիան Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցագրի միջոցով:

2. Չեղյալ հայտարարելը պետք է ուժի մեջ մտնի եռամսյա ժամանակահատվածը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը՝ սկսած ծանուցումը գլխավոր քարտուղարի ստանալու ամսաթվից:
3. Սույն Կոնվենցիան, սակայն, պետք է շարունակի գործել 23-րդ հոդվածի համաձայն այնպիսի բռնագրավում իրագործելու նկատմամբ, որի վերաբերյալ, Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, հարցում է արվել մինչև այդպիսի չեղյալ հայտարարման ուժի մեջ մտնելու ամսաթիվը:

Հոդված 56. Ծանուցումներ

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը պետք է ծանուցի Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին, Եվրոպական համայնքին, Կոնվենցիայի մշակմանը մասնակցած ոչ անդամ պետություններին, դրան միանալու համար հրավիրված յուրաքանչյուր պետության և Կոնվենցիայի յուրաքանչյուր այլ Կողմի.

ա) յուրաքանչյուր ստորագրման մասին.

բ) վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու վերաբերյալ յուրաքանչյուր փաստաթուղթ ի պահ հանձնելու մասին.

գ) 49-րդ և 50-րդ հոդվածների համաձայն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու յուրաքանչյուր ամսաթվի մասին.

դ) 53-րդ հոդվածի համաձայն արված յուրաքանչյուր հայտարարության կամ վերապահման մասին.

ե) Կոնվենցիային առնչվող յուրաքանչյուր այլ փաստաթղթի, ծանուցման կամ հաղորդակցության մասին:

Ի հաստատումն որի՝ ներքոստորագրյալները, Կոնվենցիայի հարցերով պատշաճորեն լիազորված լինելով, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Վարշավայում 2005թ. մայիսի 16-ին, անգլերեն և ֆրանսերեն հավասարազոր տեքստերով, մեկ օրինակով, որը ի պահ է տրվում Եվրոպայի խորհրդի արխիվներին: Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը պետք է վավերացված օրինակները փոխանցի Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետության, Եվրոպական համայնքին, Կոնվենցիայի մշակմանը մասնակցած ոչ անդամ պետություններին և դրան միանալու համար հրավիրված յուրաքանչյուր պետության:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

ա) Մասնակցություն կազմակերպված հանցավոր խմբում և շորթում բ) ահաբեկչություն, ներառյալ ահաբեկչության ֆինանսավորումը գ) մարդկանց թրաֆիկինգ և անօրինական փոխադրում դ) սեռական շահագործում, ներառյալ երեխաների սեռական շահագործումը ե) թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառություն զ) զենքի ապօրինի շրջանառություն է) գողացված և այլ իրերի ապօրինի շրջանառություն ը) կոռուպցիա և կաշառակերություն թ) խարդախություն ժ) դրամի կեղծում ժա) ապրանքների կեղծում և հեղինակային իրավունքի խախտում ժբ) բնապահպանական հանցագործություններ ժգ) սպանություն, ծանր մարմնական վնասվածքների պատճառում ժդ) մարդկանց առևանգում, ազատության անօրինական սահմանափակում և պատանդառություն ժե) կողոպուտ կամ գողություն ժզ) մաքսանենգություն ժէ) դրամաշորթություն ժը) փաստաթղթերի կեղծում ժթ) հեղինակային իրավունքի խախտում, և ի) ներքին առևտուր և շուկայական մեքենայություն

Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2008թ. հոկտեմբերի 1-ին: